Հավելված 4. Կանաչ Քաղաքների Գործիքի բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգ (ԲՍԿՀ)

Տերմինաբանական բառարան

ԼՀՄ	Լավագույն հասանելի մեթոդներ
CITES	«Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՀԳ	Համապատասխանության գերազանցում
ԵՀ	Եվրոպական հանձնաժողով
ԵՏՀ	Եվրոպական տնտեսական համայնք
ԵՄ	Եվրամիություն
ԲՍԳՊ	Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլան
ԷԾՄԸ	Էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերություն
ՇՄԿԶՎ	Շրջակա միջավայրի և կայուն զարգացման վարչություն
ԲՍՓ	Բնապահպանական և սոցիալական փորձաքննություն
ՇՄՍԱԳ	Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատում
ԲՍԿՇՀ	Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակ և համակարգ
ԲՍԿՇ	Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակ
ԲՍԿՊ	Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան
ԲՍԿՀ	Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգ
ԲՍՔ	Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն
ԲՍԿԱՇ	Բնապահպանական և սոցիալական կայունության ապահովման շրջանակ
E2C2	Էներգաարդյունավետություն և կլիմայի փոփոխություն
ԲՍ	Բնապահպանական և սոցիալական
ԼՀ	Լիարժեք համապատասխանություն
ՖՄ	Ֆինանսական միջնորդ
ՆՀՀ	Նախկին Հարավսլավական Հանրապետություն
ԿՔԳՊ	«Կանաչ քաղաքների» գործողությունների պլան
ԿԿՀ	Կանաչ կլիմայի հիմնադրամ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԼՊ	Միջազգային լավագույն պրակտիկա
ՄՖՀ	Միջազգային ֆինանսական հաստատություն
ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կորպորացիա
ՄԾԿ	Միջազգային ծովային կազմակերպություն
կմ	կիլոմետր
ԱԱՑ	Արդյունավետության առանցքային ցուցանիշ

ԿՄՎՊ	Կենսապահովման միջոցների վերականգնման պլան
MARPOL	«Նավերից առաջացող աղտոտումը կանխարգելելու մասին» միջազգային կոնվենցիա
ՆԱ	Նյութական անհամապատասխանություն
ՓՀ	Փոխըմբռնման հուշագիր
Կ/Չ	Կիրառելի չէ
NB	Ծանոթագրություն
NOP	Հնարավոր չէ կարծիք կազմել
ՄՀ	Մասնակի համապատասխանություն
ՊԲ	Պոլիքլորացված բիֆենիլներ
ԾԲՄ	Ծրագրի բողոքարկման մեխանիզմը
ԴՊՆ	Դիսպերսված պինդ նյութ
ՕՇՔՆ	Օզոնային շերտը քայքայող նյութ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏԳՊ	Տարաբնակեցման գործողությունների պլան
ՏՔՇ	Տարաբնակեցման քաղաքականության շրջանակ
ԾԱՓ	Ծրագրի ամփոփ փաստաթուղթ
ՇԿՆՊ	Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան
SOLAS	«Ծովում մարդկային կյանքի պահպանման մասին» միջազգային կոնվենցիա
tCO_2eq	մեկ տոննա CO2 –ի համարժեքը
ՏԱ	Տեխնիկական առաջադրանք

ԲՍԿՀ-ի ամփոփ նկարագիր

ՎԶԵԲ-ը որդեգրել է Բնապահպանական և սոցիալական կայունության ապահովման համապարփակ շրջանակ (ԲՍԿԱՇ), որը բաղկացած է Բնապահպանական և սոցիալական քաղաքականությունից (ԲՍՔ) և մի շարք բնապահպանական և սոցիալական՝ կատարողականի նկատմամբ պահանջներից: ԲՍԿԱՇ-ն համաձայնեցված է այլ միջազգային ֆինանսական հաստատությունների հետ, ինչպիսիք են՝ Միջազգային ֆինանսական կորպորացիան և Էկվատոր բանկերը: ՎԶԵԲ-ը նաև հետևում է բնապահպանական և սոցիալական ընթացակարգերին, որոնք ուրվագծում են գործընթացը, ըստ որի Բանկի աշխատակիցները վարում և վերահսկում են ծրագրերը՝ ԲՍՔ-ի ընդհանուր շրջանակների համաձայն:

ՎԶԵԲ-ի ԲՍԿԱՇ-ի համաձայն, բոլոր ծրագրերը ենթարկվում են բնապահպանական և սոցիալական գնահատման՝ օգնելու ՎԶԵԲ-ին որոշել, արդյոք ծրագիրը կստանա ֆինանսավորում և, եթե այո, ապա ինչպես կարելի է անդրադառնալ բնապահպանական և սոցիալական ռիսկերին և ազդեցություններին ծրագրերի պլանավորման, իրականացման և շահագործման փուլերում: Գնահատման գործընթացը նաև օգնում է հնարավորություններ հայտնաբերել լրացուցիչ բնապահպանական կամ սոցիալական օգուտներ քաղելու համար: Իր՝ ԲՍԿԱՇ և բնապահպանական ու սոցիալական գնահատման և մոնիտորինգի գործընթացների օգնությամբ,

ՎԶԵԲ-ը ձգտում է, որպեսզի ծրագրերը նախագծվեն, իրականացվեն և շահագործվեն կարգավորման կիրառվող պահանջների և միջազգային լավագույն փորձի համաձայն:

ՎԶԵԲ-ն ունի սոցիալական գնահատումներ իրականացնելու փորձ: Այնպիսի գործիքների միջոցով, ինչպիսիք են հարցումներն ու ֆոկուս խմբերը, կարելի է հայտնաբերել և գնահատել գործունեության ազդեցությունը տարբեր սոցիալական խմբերի վրա՝ հատուկ ուշադրություն դարձնելով ավելի խոցելի խմբերին: Դրանից հետո որոշվում և իրականացվում են համապատասխան մեղմացնող միջոցառումները՝ ազդակիր խմբի հետ խորհրդակցությամբ: Բացի այդ, նման գնահատումները կարող են հնարավորություն ստեղծել բարելավելու մարդկանց կյանքի սոցիալ-տնտեսական որակը՝ ավելի լավ հասկանալով իրենց ձգտումներն ու առաջնահերթ խնդիրները:

1. Գործիքի նախապատմությունը և նկարագրությունը

1.1 Նախապատմություն

Քաղաքները կարևոր դերակատարություն ունեն «կայուն զարգացման ապահովմանն ու աղքատության վերացմանն ուղղված ջանքերի համատեքստում՝ կլիմայի փոփոխության սպառնալիքին գլոբալ արձագանք տալու» գործընթացի ամրապնդման առումով, - ասված է COP21 Փարիզի համաձայնագրում: Կովկասի, Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի, Կենտրոնական Ասիայի և Հարավ-արևելյան Եվրոպայի («Գործիքի կիրառման տարածաշրջանի») քաղաքների առջև ընդհանուր խնդիրներ են դրված. նվազեցնել էներգետիկ և ածխաթթու գազի արտանետման ինտենսիվությունը, որոնք գերազանցում են համաշխարհային միջին ցուցանիշները: Բացի այդ, նրանք բախվում են մի շարք հրատապ բնապահպանական և սոցիալական խնդիրներին՝ կլիմայի փոփոխության ազդեցությունից մինչև օդի վատ որակի պատճառով քաղաքացիների առողջության և բարեկեցության վատթարացումը:

Հիմնվելով մունիցիպալ և բնապահպանական ենթակառուցվածքներում ներդրումային ծրագրերի իրականացման ավելի քան 25 տարվա աշխատանքային փորձի վրա՝ ներդնելով ավելի քան 700 մլն եվրո և տարեկան մեղմացնելով 800,000 տոննային համարժեք ածխաթթու գազի արտանետումների ազդեցությունը, ՎԶԵԲ-ը մշակել է հարաբերություններ, գործիքներ և փորձագիտություն՝ ապահովելու Կանաչ Քաղաքների Գործիքի արդյունավետ իրականացումը:

Գործիքը կստեղծի պարադիգմատիկ տեղաշարժ քաղաքի պլանավորման գործընթացում, տրամադրելով մոդելներ և ներդրումներ, որոնք այլ քաղաքները կարող են որդեգրել և կրկնօրինակել: Կստեղծվեն մի շարք հնարավորություններ քաղաքների ներսում և նրանց ու մունիցիպալ կոմունալ ընկերությունների միջև ուսուցման և գիտելիքների փոխանցման համար: Կանաչ Քաղաքների Գործիքը քաղաքներին գործիքներ է տրամադրում, որոնք անհրաժեշտ են, որպեսզի նրանք էականապես բարելավեն բնապահպանական ոլորտում իրենց կատարողականը և հաստատեն գլոբալ համատեքստին ադապտացվող կարևոր նախադեպեր՝ անդրադառնալու էլ ավելի հրատապ մարտահրավերներին, որոնք կապված են քաղաքային բնակավայրերում կլիմայի փոփոխության հետ:

1.2 Գործիքի նկարագրությունը

Կանաչ Քաղաքների Գործիքը նախատեսված է Գործիքի կիրառման տարածաշրջանի առջև ծառացած բազմաթիվ մարտահրավերներին անդրադառնալու և հետևյալ նպատակներն իրականացնելու համար.

Նպատակ 1. Աջակցություն ցուցաբերել քաղաքականության և ռազմավարության հետ կապված հարցերում

Սահմանել յուրաքանչյուր շահառու քաղաքի կայուն զարգացման ուղենիշներն ու տեսլականը և օգնել քաղաքի իշխանություններին ու հիմնական շահագրգիռ կողմերին տեղեկացված որոշումներ կայացնել, հաշվի առնելով կլիմայի վիճակը՝ հաղթահարելու բնապահպանական մարտահրավերները:

- Մշակել կանաչ ռազմավարության փաստաթղթերը և իրականացնել դրանց դրույթները՝ հայտնաբերելու, ուղենիշներ սահմանելու, ըստ առաջնահերթության կարևորելու և ուղղորդելու կանաչ քաղաքների գործողությունները:
- Մշակել օրենսդրական/կարգավորող փոփոխություններ, որոնք անհրաժեշտ են՝ ամրապնդելու կայուն ներդրումներին նպաստող միջավայրը, օրինակ՝ աջակցելով կառավարություններին բյուջեի մասին օրենքներում փոփոխություններ կատարելու գործընթացում, եթե, կառավարության կարծիքով, այնտեղ խոչընդոտներ կան:
- Գենդերային հավասարության քաղաքականությանն աջակցություն ցուցաբերել և համայնքներին աջակցել գենդերային հավասարության սկզբունքներն իրենց գործունեության մեջ կիրառելու գործում:

Նպատակ 2. Կանաչ քաղաքների ենթակառուցվածքում ներդրումներին աջակցել և խթանել դրանք

- Դյուրացնել և խթանել պետական և համայնքային վարկավորումը՝ կատարելու կլիմայի փոփոխության մեղմացման, ադապտացման ու դիմադրողականության ապահովմանն ուղղված ներդրումներ գերակա ոլորտներում, այդ թվում՝ հանրային շենքերի էներգախնայողության, ջրի և կեղտաջրերի, քաղաքային տրանսպորտի, քաղաքային ճանապարհների և լուսավորության, կոշտ թափոնների կառավարման և թաղամասերի ջեռուցման արդիականացման ուղղությամբ:
- Ապահովել գենդերային ավելի մեծ հավասարություն համայնքային ծառայությունների մատչելիության և օգտագործման առումով:

Նպատակ 3. Զարգացնել քաղաքային իշխանությունների և հիմնական շահագրգիռ կողմերի կարողությունները

Նպատակային տեխնիկական օժանդակության միջոցով Գործիքը կզարգացնի տեղական մասնագետների կարողությունները հետևյալ ոլորտներում.

- համակարգված, համակողմանի ռազմավարական պլանավորում քաղաքի մակարդակով՝ շեշտադրելով կլիմայի փոփոխության մեղմացումը, ադապտացումը և դիմադրողականությունը
- տեղական ինքնակառավարման մակարդակում ֆինանսական և գործառնական կատարողականի բարելավում
- բնապահպանական/սոցիալական երաշխիքների ստեղծում և դրանց իրականացման կառավարում

- հանրային իրազեկության մակարդակի բարձրացում և սոցիալական, տնտեսական և բնապահպանական համատեղ օգուտների ընդլայնում
- Քաղաքի իշխանությունների և հիմնական շահագրգիռ կողմերի կարողությունների զարգացում ՝ աշխատատեղերի հասանելիության հարցում գենդերային հավասարությունն ապահովելու նպատակով:

Նպատակ 4. Քաղաքների համար ապահովել և հեշտացնել դեպի կապիտալի շուկաներ մուտք գործելու ճանապարհը

- Մշակել ռազմավարական քայլեր՝ հաղթահարելու այն խոչընդոտները, որոնք բարդացնում են դեպի կապիտալի շուկաներ մուտք գործելու գործընթացը, և աջակցելու ենթակառուցվածքների ոլորտում ներդրումներին:
- Զարգացնել տեղական կառավարությունների և շահագրգիռ կողմերի կարողությունները՝ ապահովելու այնպիսի պայմաններ ու գործընթացներ, որոնք գրավիչ կլինեն մասնավոր ներդրողների համար:

Այս նպատակներին հասնելու համար Գործիքը կհամատեղի ռազմավարությանն ու քաղաքականությանը ցուցաբերվող աջակցությունը, ենթակառուցվածքներում ներդրումները և կարողությունների զարգացումն ու տեխնիկական աջակցությունը՝ առավել արդյունավետ կերպով անդրադառնալու քաղաքների յուրահատուկ կարիքներին և շուկայական խոչընդոտներին: Կանաչ Քաղաքների Գործիքը նպատակ ունի նաև ի ցույց դնելու «ընդհանուր, բայց տարբերակված» գործողությունները՝ Գործիքի կիրառման տարածաշրջանի քաղաքներում պայքարելու կլիմայի փոփոխության և բնապահպանական մարտահրավերների դեմ՝ ապահովելով ամբողջական մոտեցում, որպեսզի քաղաքները հայտնաբերեն, ըստ առաջնահերթության դասակարգեն և հաղթահարեն իրենց մարտահրավերները կայուն զարգացման համատեքստում:

Գործիքը կանդրադառնա կանաչ քաղաքի գործողությունների բազմաթիվ շուկայական խոչընդոտներին՝ տրամադրելով.

Բաղադրիչ 1. Կանաչ քաղաքների գործողությունների պլան և քաղաքականության վերաբերյալ երկխոսություն. մշակել և իրականացնել կանաչ ռազմավարության փաստաթղթերը՝ հայտնաբերելու, ուղենիշ սահմանելու, ըստ առաջնահերթության դասակարգելու և ուղորդելու քաղաքապետարանի գործողությունները, որոնք անդրադառնում են կլիմայի փոփոխության խնդրին և ձգտում «կանաչ աճ» ապահովել, ինչպես նաև մշակել օրենսդրության /քաղաքականության փոփոխություններ:

Բաղադրիչ 2. Կանաչ քաղաքի ենթակառուցվածքներում ներդրումներ. հեշտացնել ու խթանել պետական և համայնքային վարկավորումը՝ կլիմայի փոփոխության մեղմացման և դիմադրողականության բարձրացման նպատակով ներդրումներ կատարելու գերակա ոլորտներում, այդ թվում՝ շենքերում էներգաարդյունավետության, ջրի և ջրահեռացման, քաղաքային տրանսպորտի, քաղաքային ճանապարհների և լուսավորության, կոշտ թափոնների կառավարման և թաղամասերի ջեռուցման արդիականացման ոլորտներում: Այս ծրագրերի իրականացման համար քաղաքները չեն սահմանափակվի ՎԶԵԲ-ի կողմից տրամադրված ֆինանսավորումով:

Բաղադրիչ 3. Տեխնիկական աջակցություն և գիտելիքների զարգացում. բարելավել ֆինանսական և գործառնական ոլորտներում կատարողականը քաղաքապետարանների մակարդակով, սահմանել և կառավարել կլիմայի փոփոխության մեղմացման և ադապտացման, ինչպես նաև տնտեսական և սոցիալական երաշխիքների իրականացումը, բարձրացնել հանրային իրազեկության մակարդակը և խթանել սոցիալական, տնտեսական և բնապահպանական համատեղ օգուտները: Տարածել կանաչ քաղաքների զարգացման լավագույն փորձը՝ կազմակերպելով միջոցառումներ, դասընթացներ և մասնակցելով համաշխարհային քաղաքային ցանցերին:

Բաղադրիչ 4. Կանաչ կապիտալի շուկաների Ճանապարհային քարտեզ. Մշակել գործիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքներին՝ ներգրավելու կանաչ ներդրումների համար մասնավոր հատվածի ֆինանսավորում, այդ թվում՝ իրազեկելով կանաչ ներդրումների համար կապիտալի շուկայում ներգրավվելու հնարավորությունների մասին, ինչպես նաև հայտնաբերել և որակավորել կանաչ ֆինանսավորման համար համապատասխան ներդրումները և նոր իրողություններից կապիտալ մոբիլիզացնել:

2. Գործիքի մասնակից դառնալու իրավունք

2.1 Նպատակային քաղաքները և նրանց իրավունքը՝ մասնակցելու Գործիքի կիրառմանը

Քաղաքները կնախաձեռնեն իրենց ներգրավվածությունը Գործիքին՝ ներկայացնելով Կանաչ Քաղաքի գործողությունների ծրագրի և ներդրումային ենթանախագծի համադրություն, որն այսուհետ կոչվում է մեկնարկային նախագիծ և համապատասխանում է կատարողականի կոնկրետ չափանիշներին: Այս երկու ստանձնած պարտավորությունները կհանդիսանան որպես գործարկիչներ՝ նախաձեռնելու Գործիքում քաղաքների ընդգրկումը: Լրացուցիչ քաղաքներ ու ներդրումային ծրագրեր կկարողանան միանալ Կանաչ Քաղաքների Գործիքին՝ ենթակա մասնակցության իրավունքի հետևյալ չափորոշիչներին:

Նախքան ՎԶԵԲ-ը կհաստատի կանաչ քաղաքի յուրաքանչյուր նախագիծ Գործիքի շրջանակում, պետք է անցկացվի արդիական փորձաքննություն: Որպես յուրաքանչյուր ենթածրագրի ուսումնասիրության մի մաս, ՎԶԵԲ-ը կգնահատի քաղաքապետարանների և քաղաքային կոմունալ ծառայությունները սպասարկող ընկերությունների կարողությունները՝ նախագիծը հաջողությամբ իրականացնելու և ազգային կանոնակարգերին, ինչպես նաև ՎԶԵԲ-ի քաղաքականությանը և ԿԿՀ-ի պահանջներին համապատասխանությունն ապահովելու առումով: Հաճախորդների կարողությունների գնահատումը՝ բնապահպանական և սոցիալական պարտականությունները կատարելու և ծրագիրը ՎԶԵԲ-ի կատարողականի նկատմամբ պահանջների համաձայն իրականացնելու առումով, ՎԶԵԲ-ի Բնապահպանական և սոցիալական գնահատման անբաժանելի մասն է: Սա ներառում է հաճախորդի ԲՍ քաղաքականության, կառավարման համակարգերի և ռեսուրսների գնահատում ըստ Կատարողականի նկատմամբ պահանջ 1-ի, որը ներառում է, ի թիվս այլոց, բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգի, բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի և կազմակերպությունների կարողությունների և հանձնառության նկատմամբ պահանջները: Եթե հայտնաբերվում են բացեր, որոնց պատճառով ՎԶԵԲ-ի պահանջներին համապատասխանելը բարդանում է, ապա Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլանում ներառվում են կազմակերպչական կարողությունների ամրապնդմանն ուղղված միջոցառումները: Եթե Հաճախորդը աջակցության կարիք ունի, ՎԶԵԲ-ը կարող է դիտարկել կարողությունների

զարգացման նպատակով տեխնիկական օժանդակության տրամադրման հնարավորությունը իր՝ Տեխնիկական համագործակցության հիմնադրամի միջոցով:

Ակնկալվում է, որ Գործիքի այս փուլում առնվազն 10 քաղաքում կձեռնարկվեն հետևյալ գործողությունները.

- Կմշակվի Կանաչ Քաղաքի գործողությունների պլանը (Բաղադրիչ 1),
- Յուրաքանչյուր քաղաքում ներդրումներ կարվեն 1-ից մինչև 4 ծրագրերում, որոնք կանաչ քաղաքի ենթակառուցվածքային ծրագրեր են (Բաղադրիչ 2), և
- Կստեղծվեն ինստիտուցիոնալ կարողություններ՝ զարգացնելու, պահպանելու և շահագործելու քաղաքային ենթակառուցվածքները՝ պատասխանատու վերաբերմունք ցուցաբերելով կլիմայի հանդեպ (Բաղադրիչ 3):
- որտեղ հնարավոր է, ընդլայնել կապիտալի շուկաներում ներգրավվածությունը՝ հայտնաբերելով կանաչ ներդրումներին օժանդակելու հնարավորությունները (Բաղադրիչ 4):

2.2 Կատարողականի չափանիշներ՝ ենթածրագրում մասնակցելու իրավունք ստանալու համար

Գործիքի նախագծերը, թե՛ մեկնարկային և թե՛ ԿՔԳՊ-ի մշակմանը հաջորդող, պետք է կազմվեն այնպես, որպեսզի համապատասխանեն Բանկի բնապահպանական և սոցիալական խիստ պահանջներին, որոնք սահմանված են Կատարողականի նկատմամբ պահանջների մեջ, ինչպես նաև բավարարեն հետևյալ բնապահպանական և սոցիալական չափանիշներին, որոնք գնահատվել են նախկինում արված վերլուծության միջոցով:

- Քաղաքում բոլոր ներդրումային ծրագրերը
    - i) Կհամապատասխանեն հետևյալ պայմանին կամ պայմաններին՝ ապացուցելու կլիմայական փոփոխության հետևանքների մեղմացման կամ ադապտացման վրա իրենց ազեցությունը .
        - Համայնքի համապատասխան գործունեության արդյունքում առաջացող ջերմոցային գազերի արտանետումները կրճատել առնվազն 15 տոկոսով, կամ
        - Բարելավել էներգաարդյունավետությունը առնվազն 15 տոկոսով[1], կամ

[1] ՋԳ և էներգաարդյունավետության չափումները կհամապատասխանեն ՎՋԵԲ-ի՝ Անցում դեպի Կանաչ տնտեսություն ձեռնարկին՝ գնահատելու ծրագրերի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և հաշվետվություններ կազմելու այդ մասին: Ձեռնարկը ներառում է ՄՖՀ Շրջանակ ՋԳ Հաշվառմանը համահունչ մոտեցում ապահովելու համար

Բարձրացնել կլիմայի փոփոխության հանդեպ դիմադրողականությունը՝ համաձայն հետևյալ չափանիշների և շեմերի:

Աղյուսակ 1. «Կանաչ քաղաքների» ենթակառուցվածքային ներդրումների համար դիմադրողականության ցուցանիշներ և շեմեր

Կլիմայի հետ կապված ռիսկեր (համատեքստով պայմանավորված)	Դիմադրողականության աստիճանը	Չափման միավոր	Բարելավման շեմը
Ջրի հետ կապված խնդիրների աճ	Ջրի հասանելիության բարելավում*	մ³ / տարի[2]	10 %
Ջեռուցման հետ կապված խնդիրների աճ	Էներգիայի հասանելիության բարելավում*	կՎտժ/ տարի[3]	15 %
Ջեռուցման հետ կապված խնդիրների աճ *կամ* արտակարգ եղանակային պայմանների աճ	Մարդկանց առողջության կամ արտադրողականության բարելավում*	QALY (որակյալ կյանքի տարիները)	10%
Ջրի հետ կապված խնդիրների աճ *կամ* արտակարգ եղանակային պայմանների աճ	Մատակարարման ընդհատումների նվազեցում**	Տարեկան օրեր կամ ժամեր	10%
Ջեռուցման հետ կապված խնդիրների աճ *կամ* Հիդրոլոգիական փոփոխականության աճ *կամ* արտակարգ եղանակային պայմանների աճ	Վնասների նվազեցում**	ԼՈՒՐՋ ՎՆԱՍ. ռիսկերի հաճախա կանությունը (%) ՔՐՈՆԻԿԱԿԱՆ ՎՆԱՍ. ակտիվների ժամկետը (տարիներ)[4]	10%[5]

* կլիմայի փոփոխության/փոփոխականության նկատմամբ խոցելիության համատեքստում

** այսինքն, եղանակի հետ կապված ընդհատումներ/վնասներ

[2] Ջրի խնայողությունների չափումներն անելիս կօգտագործվի ՎԶԵԲ-ի՝ Անցում դեպի Կանաչ տնտեսություն ձեռնարկում սահմանված մեթոդաբանությունը

[3] Հիմնված է ծրագրի փորձաքննության վրա՝ օգտագործելով սկզբունքային մեթոդաբանությունը, որը սահմանված է Էներգաարդյունավետության ծրագրերի շրջանակում ՋԳ հաշվառման հանդեպ ՄՖՀ մոտեցման մեջ:

[4] Որակյալ կյանքի տարիների, տարվա ընթացքում ընդհատման օրերի կամ ժամերի և լուրջ կամ քրոնիկական վնասի չափումների հիմնված կլինեն փորձաքննության վրա՝ օգտագործելով կոնկրետ ոլորտի լավագույն փորձը:

[5] Որակյալ կյանքի տարիների, ընդհատման օրերի կամ ժամերի և լուրջ կամ քրոնիկական վնասի շեմային ցուցանիշները կարող են թարմացվել դիմադրողականության մոնիթորինգի լավագույն գործելակերպի բարելավմանը զուգահեռ:

ii) Կիրականացվեն քաղաքային ենթակառուցվածքների ոլորտներում, ներառյալ քաղաքային տրանսպորտը, թաղամասերի ջեռուցումը, ջուրը և կեղտաջրերը, փողոցների լուսավորությունը, կոշտ թափոնների կառավարումը կամ էներգաարդյունավետության բարելավումը և շենքերի վերակառուցումը,

iii) Կապահովեն, որպեսզի ֆինանսավորվող՝ ադապտացման գործողությունները չհանգեցնեն ՋԳ արտանետումների աճին,

- Բացի այդ.
  - Բոլոր մեկնարկային ներդրումային ծրագրերը կերաշխավորեն i) ԿՔԳՊ-ի մշակումը, որը հիմնված կլինի ԿՔԳՊ մեթոդաբանության վրա և ii) քաղաքապետարանի աշխատակիցների նշանակումը, ովքեր պատասխանատու են ԿՔԳՊ-ի մշակման և իրականացման համար:
  - ԿՔԳՊ-ի մշակմանը հաջորդող բոլոր ներդրումները և մեկնարկային ծրագրերի իրականացումը կանդրադառնան առաջնահերթ բնապահպանական մարտահրավերին[6] , որը նշված կլինի կոնկրետ քաղաքի ԿՔԳՊ-ում: Առաջնահերթ բնապահպանական մարտահրավերները կընտրվեն քաղաքապետարանի կողմից՝ ելնելով ԿՔԳՊ-ի ցուցանիշներից, որոնց օգնությամբ չափվում է քաղաքի բնապահպանական կատարողականը:
  - Կլիմայի փոփոխությանն ադապտացմանն ուղղված բոլոր ներդրումները սույն Գործիքի ներքո կմշակվեն և կգնահատվեն՝ օգտագործելով կլիմայի ռիսկերի գնահատման հուսալի գործընթաց: Օգտագործվելու են հաստատված առկա մոտեցումներ, օրինակ՝ Բազմակողմ զարգացման բանկերի՝ Կլիմայի ֆինանսավորման խմբի ադապտացման ֆինանսավորման հսկման 'եռաբայլ'մեթոդաբանությունը, և Կլիմայի փոփոխությանն ադապտացվելու ծրագրերի մշակման մասին EUFIWACC –ի ձեռնարկը : Այսպիսով, յուրաքանչյուր առաջարկվող ներդրման խոցելիության համատեքստը հստակ կնկարագրվի և կգնահատվի որպես ցածր, միջին կամ բարձր: Այս գործընթացը նաև կօգտագործվի՝ որոշելու, արդյոք առաջարկվող ներդրումը համապատասխանում է ԿՔՇ-ում նախատեսված՝ համապատասխանության չափորոշիչներին, որոնք կիրառվում են կլիմայի փոփոխությանն ադապտացվելու ծրագրերի նկատմամբ:

2.3 Ենթածրագրերի և մեղմացման գործողությունների պոտենցիալ բնապահպանական և սոցիալական ռիսկերը և ազդեցությունը

Գործիքը և հատկապես՝ Կանաչ Քաղաքի գործողությունների պլանի գործընթացը, կառուցված են ռազմավարական բնապահպանական գնահատման մոդելի հիման վրա և ունեն նմանատիպ նպատակներ, ինչի արդյունքում կազմվում է մի փաստաթուղթ, որում արտացոլված է քաղաքի *կանաչ տեսլականը*, ռազմավարական նպատակները և առաջնահերթ գործողությունները և ներդրումները՝ հաղթահարելու գերակա բնապահպանական մարտահրավերները, ինչի շնորհիվ քաղաքը արդյունավետորեն կիրականացնի իր բնապահպանական նպատակները: Ավելին, ԿՔԳՊ

[6] ԿՔԳՊ մեթոդաբանության մեջ գերակա բնապահպանական մարտահրավերը հայտնաբերվում է՝ օգտագործելով թե՛ ցուցանիշները և թե՛ շահագրգիռ կողմերի առաջարկությունները: Որոշ դեպքերում հնարավոր է, որ շահագրգիռ կողմերը հայտնաբերեն իրենց քաղաքի համար առաջնահերթ բնապահպանական մարտահրավեր այնտեղ, որտեղ համապատասխան ցուցանիշը խնդիր չի հայտնաբերել (օրինակ, երբ ցուցանիշի կատարողականը ավելի բարձր է, քան միջազգային բնապահպանական չափորոշիչներինը): Այս դեպքում ցանկացած ծրագիր, որը անդրադառնում է նման գերակա բնապահպանական մարտահրավերին, պետք է արդարացված լինի կոնկրետ դեպքերի հիման վրա:

գործընթացը արտացոլում է ռազմավարական բնապահպանական գնահատման գործընթացի քայլերը՝ ելակետը սահմանելուց մինչև ենթածրագրի հատուկ բնապահպանական և սոցիալական օգուտների, ռիսկերի և ազդեցությունների գնահատումը, շահագրգիռ կողմերի ներգրավումից մինչև առաջնային գործողությունների սահմանումը: Այս ռազմավարական մոտեցումը, որը ինտեգրում է բնապահպանական և սոցիալական նկատառումները և առաջնահերթ ենթածրագրերի ընտրության ամբողջ գործընթացին շահագրգիռ կողմերի մասնակցությունը, ինքնին արդյունավետ կերպով կնպաստի գերակա ծրագրերի հետ կապված բնապահպանական և սոցիալական ռիսկերից խուսափելուն կամ դրանք նվազագույնի հասցնելուն: Դրան կգումարվեն ենթածրագրերին հատուկ բնապահպանական և սոցիալական գնահատումները, որոնք կոնկրետ կնշեն, թե մեղմացման ինչ միջոցառումներ են անհրաժեշտ՝ կազմելու ծրագրերը այնպես, որպեսզի նրանք բավարարեն ՎԶԵԲ-ի կատարողականի պահանջներում սահմանված՝ կայունության արդյունքներին:

Ակնկալվում է, որ ենթածրագրերը կիրականացվեն հիմնական գերակա ոլորտներում, այդ թվում՝ հասարակական և բնակելի շենքերի էներգաարդյունավետության, ջրի և ջրահեռացման, քաղաքային տրանսպորտի, քաղաքային ճանապարհների և լուսավորության, կոշտ թափոնների կառավարման և կենտրոնացված ջեռուցման ոլորտներում: Առաջնահերթ ենթածրագրերը պետք է համապատասխանեն բարձր բնապահպանական կատարողականի չափանիշներին (ինչպես նշված է վերևում) և հիմնականում հանգեցնեն էական բնապահպանական օգուտների, և նրանք սովորաբար կապված են սահմանափակ և ժամանակավոր բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների հետ, որոնք սահմանափակվում են արդիականացման կամ շինարարական աշխատանքների իրականացման փուլով: Պոտենցիալ բնապահպանական ռիսկերը և ազդեցությունները սովորաբար տարբեր բնույթի են լինում, կախված նրանից, թե արդյոք այդ ծրագիրը ներառում է առկա օբյեկտների արդիականացում, թե՝ նոր օբյեկտների կամ սարքերի կառուցում:

- Այն ենթածրագրերում, որոնք ընդգրկում են առկա օբյեկտների արդիականացում, որտեղ հողօգտագործման փոփոխություն հարկավոր չէ, ակնկալվում է, որ ռիսկերը կապված են լինելու աշխատանքների իրականացման վայրի հետ և կարող են հեշտությամբ մեղմացվել՝ կիրառելով միջազգային լավագույն փորձը:
- Այն ենթածրագրերում, որոնք ներառում են նոր օբյեկտների շինարարություն, ինչպիսիք են ջրի, ջրահեռացման կամ թաղամասերի ջեռուցման նոր ցանցերը, քաղաքային նոր ճանապարհները, կեղտաջրերի մաքրման լայնածավալ կայանները, թաղամասերի ջերմակայանները կամ կոշտ թափոնների կառավարման օբյեկտները, հատուկ ուշադրություն պետք է դարձվի տարածական պլանավորման սահմանափակումներին, որոնք բխում են քաղաքային միջավայրում այդ ծրագրերի իրականացումից: Այդ տիպի ծրագրերը կարող են պահանջել շահագրգիռ կողմերի ներգրավման և մասնակցության գործընթաց՝ հայտնաբերելու օպտիմալ լուծումները, հատկապես աշխատանքների իրականացման վայրի հետ կապված, և գտնելու արդյունավետ եղանակներ՝ խուսափելու կամ նվազագույնի հասցնելու և մեղմացնելու հնարավոր բնապահպանական և սոցիալական ռիսկերը և ազդեցությունները, որոնք բխում են հողօգտագործման փոփոխություններից: Շահագրգիռ կողմերի արդյունավետ և իմաստալից ներգրավումը առանցքային կլինի՝ համայնքի մտահոգությունները հայտնաբերելու և դրանց անդրադառնալու համար:

Այս երկու տեսակի ծրագրերի համար կմշակվեն գործողությունների պլաններ՝ համաձայնեցնելու կոնկրետ միջոցառումները և խուսափելու կամ մեղմացնելու հնարավոր բնապահպանական և սոցիալական ռիսկերը և հետևանքները:

3. Քաղաքային, բնապահպանական և սոցիալական համատեքստ

3.1 Քաղաքային համատեքստ

Հարավարևելյան Եվրոպայի քաղաքային շրջանները բախվում են նմանատիպ մարտահրավերներին, որոնցից շատերը կապված են էներգիայի օգտագործման հետ: Սերբական քաղաքներում կա էներգաարդյունավետության բարելավումների հատկապես մեծ ներուժ: Այս ներուժն ավելի բարձր է, քան ՎԶԵԲ-ի տարածաշրջանի շատ այլ երկրներում, քանի որ արդյունաբերական սարքավորումների և շինությունների (հատկապես հանրային) սպասարկումն անուշադրության էր մատնված, և առկա են մեծ քանակությամբ սարքավորումներ, որոնց տնտեսական, ինչպես նաև ֆիզիկական մաշվածությունը չափազանց բարձր է: Այս ներուժը նաև պայմանավորված է էներգակիրների աճող գներով, հնացած և անարդյունավետ արդյունաբերական սարքավորումներով, ինչպես նաև չափիչների և հսկիչ սարքերի բացակայությամբ: Էլեկտրաէներգիայի նման թանկացումները լրացուցիչ ծախսերի բեռ են ստեղծում գործարարների և շինությունների սեփականատերերի/ադմինիստրատորների համար, ովքեր արդեն իսկ բարդություններ ունեն ներկայիս տնտեսական միջավայրում: Էներգաարդյունավետության բարելավումը այս մարտահրավերի արդյունավետ պատասխան կլինի:

Ալբանիայում քաղաքային տարածաշրջանները բախվում են նմանատիպ մարտահրավերներին, այսինքն, թե՛ բնակելի և թե՛ հասարակական շենքերը հաճախ անարդյունավետ են, ինչը հնարավորություններ է ստեղծում էներգետիկ ծախսերի խնայողությանն ուղղված ներդրումներ կատարելու համար: Ավելին, Ալբանիան և նրա քաղաքները ամբողջությամբ կախված են հիդրոէլեկտրաէներգիայից և ներմուծումից՝ բավարարելու էլեկտրաէներգիայի պահանջարկը, սակայն Ալբանիան դեռ ավելի հաճախ է հոսանքազրկվում, քան Հարավարևելյան Եվրոպայի մնացած երկրները: Ոչ դիվերսիֆիկացված էլեկտրաէներգիայի արտադրանքը զուգորդվում է կլիմայի ադապտացման լուրջ ներդրումային կարիքներով, քանի որ կանխատեսվում է, որ հիդրոէլեկտրաէներգիայի արտադրությունը կտուժի կլիմայի ազդեցությամբ պայմանավորված՝ հիդրոլոգիայի փոփոխություններից և մակերևութային հոսքի կրճատումից:

ՆՀՀ Մակեդոնիայում օդի աղտոտվածության մակարդակը ամենաբարձրներից մեկն է Եվրոպայում, և դա նպաստում է լուրջ առողջապահական խնդիրների ծագմանը: Սա առավել ցայտուն է երևում քաղաքային բնակավայրերում՝ մարդկանց առողջության վրա ազդեցության ավելի քան 45% -ը բաժին է ընկնում միայն Սկոպյեին: Աղտոտման մեծ մասը կարելի է վերագրել էներգետիկ ենթակառուցվածքների և տրանսպորտի ոլորտին, որտեղ հնացած սարքավորումները և գործընթացները և հին մեքենաները նպաստում են աղտոտման մակարդակների բարձրացմանը: Տրանսպորտը հատկապես ինտենսիվ արտանետումներ է առաջացնում մյուս երկրների համեմատ՝ թե՛ մեքենաների վիճակի և թե՛ ճանապարհային և տրանսպորտային ցանցերի վատ պայմանների պատճառով: Անձնական մեքենաների սեփականատերերի թիվն աճում է, մասնավորապես

քաղաքներում, որոնք դասվում են ընդլայնվող և հողը անարդյունավետ կերպով օգտագործող քաղաքների կարգին: Զարգացման նման օրինաչափությունները նպաստել են ջրամատակարարման, աղբահավաքման և էներգամատակարարման ընդհատումներին, կեղտաջրերի մաքրման բացակայությանը և հասարակական տրանսպորտի սահմանափակ հասանելիությանը:

Մոլդովայում խիստ անարդյունավետ են մասնավորապես բնակելի շենքերը: Բնակելի հատվածը Մոլդովայում էներգիայի խոշորագույն սպառողն է ազգային էներգիայի վերջնական սպառման մոտ 40% մասնաբաժնով, և բնակելի հատվածում էներգիայի սպառման շուրջ 70% -ը կապված է տարածքների ջեռուցման հետ: Սակայն Մոլդովայում շարունակում են բազմաթիվ մնալ կայուն էներգիայի ֆինանսավորման ներդրումների ճանապարհին շուկայական խոչընդոտները թե՛ արդյունաբերական և թե՛ բնակելի հատվածում, բոլոր մակարդակներում:

Թունիսում էլեկտրաէներգիայի խոշորագույն սպառողը արդյունաբերական ոլորտն է՝ 36%: Դեռևս առկա են մի շարք արգելքներ էներգաարդյունավետության բարձրացման համար, այդ թվում՝ իրազեկվածության պակասը, տեխնիկական ցածր կարողություններ և հիմնական շահագրգիռ կողմերի (օրինակ՝ ԷԾՄԸ-ների, բանկերի, արդյունաբերական ընկերությունների և կառավարական մարմինների) շրջանում վստահության պակասը: Ավելին, Թունիսը զիջում է թափոնների կառավարման և ռեսուրսների արդյունավետության հարցում, քանի որ քաղաքի կոշտ թափոնների 85% -ը նետվում է աղբավայր, իսկ վերամշակվում է ավելի քիչ, քան 1% -ը:

Քաղաքային կենտրոնները կովկասյան տարածաշրջանում, հատկապես Հայաստանում և Վրաստանում, ժառանգել են հին սերնդի հասարակական տրանսպորտի ցանցեր: Սովորաբար քաղաքն ունի տրամվայների, տրոլեյբուսների և ավտոբուսների կայացած ցանցեր, սակայն այսօրվա քաղաքները պայքարում են նույնիսկ առկա սպասարկման ցանցերը պահպանելու համար, և խոսք անգամ չի գնում հասարակական տրանսպորտի նոր ցանցերի արդիականացման կամ ընդլայնման ֆինանսավորման մասին: 1990-ականներից ի վեր տեխսպասարկման բացակայությունը առաջացրել է հասարակական տրանսպորտի համակարգերի մասնակի փակում ամբողջ տարածաշրջանում:

Մոնղոլիայի քաղաքային շրջաններում քաղաքային ենթակառուցվածքները կարգավորող օրենսդրությունը թույլ է, և քաղաքական միջամտությունը կարգավորման գործընթացին շարունակում է գերիշխել: Հաշվիչ սարքերը հազվագյուտ են և փաստացի օգտագործման հիման վրա գանձումը գրեթե գոյություն չունի, ինչը ևս չի խթանում արդյունավետ օգտագործումը: Տրանսպորտի տրամադրման առումով տարածված և շահավետ է մինի-ավտոբուսների չկարգավորվող մասնավոր ծառայությունը: Սակայն, այն ունի իր հիմնականում մաշված մեքենաները նորացնելու սահմանափակ հնարավորություններ: Ավելի ընդհանուր խնդիրներից են. ծախսերի անարդյունավետությունը (մարդկային ռեսուրսների սխալ կառավարում և բաշխում, էներգիայի բարձր սպառում), ցածր եկամուտներ (հավաքագրման ցածր ցուցանիշներ), ջրի զգալի կորուստներ և ջրի վատ որակ:

Հորդանանում քաղաքային բնակավայրերում ապրող մարդկանց տոկոսը կազմում է 83 տոկոս: Սա Գործիքում ընդգրկված բոլոր երկրներից ամենաբարձր ցուցանիշներից մեկն է: Մինչ

Հորդանանն ունի աշխարհում ջրի առկայության ամենացածր մակարդակներից մեկը, նրա քաղաքային շրջանների ջրի ենթակառուցվածքը նույնպես թերի է: Գնահատվել է, որ ջրամատակարարման ցանցերը կորցրել են ջրի միջինում 68 տոկոսը խողովակների արտահոսքի և անբավարար ջրաչափերի պատճառով: Ջրային ցանցերի սպասարկման և պահպանման համար պատասխանատու մարմինները չունեն ծախսերի վերականգնման համապատասխան մեխանիզմներ, քանի որ ջրի գինը չափազանց ցածր է համեմատելի շուկաներում առկա գներից:

3.2 Բնապահպանական և սոցիալական համատեքստ

Գործիքի բաղադրիչները ուղղակիորեն արձագանքում են Գործիքի կիրառման տարածաշրջանի բնապահպանական և սոցիալական մարտահրավերներին: Ծրագրի տարածաշրջանը բնութագրվում է էներգիայի անարդյունավետ օգտագործմամբ, այնպիսի սուր բնապահպանական խնդիրներով, ինչպիսիք են օդի աղտոտվածությունը և ածխաթթու գազի արտանետումների բարձր ինտենսիվությունը (տոննա CO2 համարժեքը / ՀՆԱ), ընդ որում որոշ երկրներում ածխաթթու գազի արտանետումները գրեթե ութ անգամ ավելի ինտենսիվ են, քան համաշխարհային միջին ցուցանիշը: Էներգետիկ անարդյունավետությունը առկա է քաղաքային բնակավայրերի թե՛ հանրային և թե՛ մասնավոր շենքերում:

Թափոնների կառավարումը մեկ այլ տարածված խնդիր է, որը էապես նպաստում է ջերմոցային գազերի արտանետումներին, երբ հին աղբավայրերից տեղի է ունենում մեթանի արտահոսք: ՎԶԵԲ-ի տարածաշրջանի շատ քաղաքներ տարեկան կտրվածքով մեկ շնչի հաշվով արտադրում են զգալիորեն ավելի շատ մունիցիպալ կոշտ թափոններ, քան միջինում ԵՄ-ում: Օրինակ, Վրաստանում այն կազմում է ԵՄ-ի միջին ցուցանիշի մոտ կրկնապատիկը: Այս թափոնների մեծ մասը նետվում է աղբավայրեր, որոնք «պարզապես թափոնավայրեր են, որտեղ համայնքային ծառայությունները (կամ կապալառուները) կուտակում կամ պարզապես տեղադրում են աղբը»: Բացի այդ, Գործիքի տարածաշրջանի քաղաքային բնակավայրերում թափոնների վերամշակումը չնչին է՝ համեմատած է ԵՄ-ի միջին ցուցանիշի հետ, որը կազմում է 39 տոկոս, և ԵՄ-ի թիրախի հետ, որը ձգտում է համայնքային կոշտ թափոնների 50 տոկոսի վերամշակման մակարդակին հասնել մինչև 2020 թ.:

Ավելին, տարածաշրջանի որոշ քաղաքներում բնակիչները ենթարկվում են օդի աղտոտման շատ ավելի բարձր մակարդակների, քան այլ բնակչությունները: Ըստ Համաշխարհային բանկի (2015 թ.), Հորդանանի քաղաքային բնակչության 100 տոկոսը ենթարկվում է վտանգավոր դիսպերսված պինդ նյութի (ԴՊՆ2.5) այնպիսի մակարդակների, որոնք գերազանցում են Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցների նորմերը, համեմատած համաշխարհային միջին ցուցանիշի հետ, որը կազմում է շուրջ 92 տոկոս:

Վատթարացող կամ հնացած քաղաքային ենթակառուցվածքները Գործիքի կիրառման տարածաշրջանում իջեցնում են կյանքի որակը, սրում են կլիմայի փոփոխության պատճառները և թույլ չեն տալիս, որպեսզի համայնքներն ադապտացվեն կամ բարելավեն իրենց դիմադրողականությունը: Այնուամենայնիվ, մի քանի արգելքներ խոչընդոտում են կանաչ քաղաքի պլանավորմանը և ենթակառուցվածքներում ներդրումների զարգացմանը: Խոչընդոտների թվում են.

- Քաղաքի պլանավորման գործընթացում կլիմայի փոփոխությանն անդրադառնալու համակարգված և համապարփակ մոտեցման բացակայությունը. Չնայած նրան, որ տարբեր երկրների կառավարությունները փորձել են անդրադառնալ քաղաքի կայունության խնդիրներին, այդ ջանքերը կրել են ժամանակավոր բնույթ, կախված քաղաքապետարանների պահանջարկից: Անհրաժեշտ է ցուցաբերել կանաչ քաղաքի զարգացման նկատմամբ համակարգված և համակողմանի մոտեցում, որը հաշվի է առնում քաղաքային կայուն զարգացման բարդությունը:
- Իրավաբանական և կարգավորիչ արգելքները, այդ թվում՝ քաղաքական խթանների կամ քաղաքապետարանի մակարդակով գործիքների բացակայությունը և էլեկտրաէներգիայի ցածր սակագները, որոնք բավարար չեն՝ կանաչ գործողությունների և ներդրումների պահանջարկը խթանելու համար:
- Ֆինանսական արգելքները, այդ թվում՝ ֆինանսավորման անհասանելիությունը, ներդրումները խթանող՝ համապատասխան գնագոյացման բացակայությունը (տոկոսադրույք և ժամկետ), քաղաքացիների շրջանում մատչելիության խնդիրները, ԱՄՀ-ի նախապայմանները, որոնք սահմանափակում են ոչ արտոնյալ պարտքերը, բարձր կատարողականությամբ տեխնոլոգիաների ավելի բարձր սկզբնական ծախսերը և տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների և էներգետիկ աուդիտի համար բյուջեների բացակայություն:
- Տեխնիկական խոչընդոտները, մասնավորապես՝ համայնքներում կարողությունների բացակայությունը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ կանաչ ենթակառուցվածքային ներդրումների հնարավորությունները գնահատելու փորձն ու հմտությունները, տեխնիկական նոու-հաուն, մարդկային ռեսուրսները և համարժեք ինստիտուցիոնալ կառուցվածքը:
- Կանաչ քաղաքների մոտեցման առավելությունների և դրա սոցիալական, տնտեսական և բնապահպանական օգուտների մասին տեղական շահառուների շրջանում իրազեկվածության պակասը:
- Կարողությունների պակասը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) շրջանում արդյունավետ հաղորդակցության/ընդգրկվածության և հմտությունների փոխանցման համար, որը հնարավորություն կընձեռեր, որպեսզի նրանք արդյունավետորեն հաղորդակցվեն իրենց ընտրատարածքների/քաղաքային բնակչության հետ՝ բարձրացնելու հասարակության իրազեկությունը և արդյունավետ կերպով նպաստելու հանրության մասնակցությանը և վարքի դրական փոփոխություններին:
- Ենթակառուցվածքների ոլորտում ներդրումների համար կապիտալի հասանելիության պակասը: Քաղաքները դժվարանում են ենթակառուցվածքային ծրագրեր ֆինանսավորելու համար կապիտալ ապահովելու գործում, հատկապես՝ մասնավոր աղբյուրներից, մի շարք գործոնների պատճառով, այդ թվում՝ բարձր սկզբնական կապիտալ ծախսերի և ենթակառուցվածքային ներդրումների հետվճարման երկար ժամանակահատվածների պատճառով /համեմատած այլ ոլորտների հետ/; քաղաքների համար վարկային վարկանիշների բացակայություն և տեղական կապիտալի շուկաների անբավարար զարգացում:

4. Բնապահպանության և սոցիալական կառավարման համակարգ (ԲՍԿՀ)

Ծրագրի համար ՎԶԵԲ-ը կկիրառի իր՝ համապարփակ բնապահպանական և սոցիալական կայունության ապահովման շրջանակը (ԲՍԿԱՇ): ՎԶԵԲ-ի ԲՍԿԱՇ-ն հիմնված է բնապահպանության և կայունության մանդատի հոդվածների վրա, որոնք սահմանում են ՎԶԵԲ-ի՝ ժամանակ առ ժամանակ թարմացվող բնապահպանական և սոցիալական քաղաքականությունը (ԲՍՔ) և կատարողականի նկատմամբ պահանջները, նպատակային բնապահպանական և կայունության զարգացման վարչությունը (ՆԲԿՎ), որի պատասխանատվությունը դրանց իրականացումն է, և նպատակային գենդերային և էներգաարդյունավետության և կլիմայի փոփոխության (E2C2) թիմերը, որոնց մանդատը ներառում է բնապահպանական, սոցիալական և գենդերային հարցերի հետ կապված հնարավորությունների համակարգված բացահայտում: ՎԶԵԲ-ը հավատարմագրվել է ԿԿՀ-ի խորհրդի կողմից 2015թ. սեպտեմբերին: ԲՍՔ-ն ու նրա՝ կատարողականի նկատմամբ պահանջների վերջին տարբերակը հաստատվել են ՎԶԵԲ-ի տնօրենների խորհրդի կողմից 2014թ. մայիսի 7-ին: ԲՍՔ-ն վերանայվել է՝ ապահովելու ՎԶԵԲ-ի համահունչ լինելը այլ միջազգային ֆինանսական հաստատությունների հետ, ինչպիսիք են Միջազգային ֆինանսական կորպորացիան և էկվատոր բանկերը՝ անդրադառնալու այն խնդիրներին, որոնք ծագել են նախորդ՝ 2008թ. ԲՍՔ-ի իրականացման ընթացքում և ճանաչելու կայունության հետ կապված մի շարք առաջացող խնդիրներ: ԲՍՔ-ի վերանայված տարբերակները կազմվեցին շահագրգիռ կողմերի հետ, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, ոլորտի ասոցիացիաների, հաճախորդների, այլ միջազգային ֆինանսական հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ ծավալուն խորհրդակցություն անցկացնելուց հետո: ԲՍԿՀ-ն ավելի մանրամասն նկարագրված է Բնապահպանական և սոցիալական ընթացակարգերի մեջ, որոնք թարմացվել են 2015թ. http://www.ebrd.com/what-we-do/strategies-and-policies/environmental-procedures.pdf, և ուրվագծում են այն գործընթացը, ըստ որի Բանկի աշխատակիցները վարում և մշտադիտարկում են ծրագրերը համաձայն ԲՍՔ ընդհանուր շրջանակների:

Համաձայն, ՎԶԵԲ-ի ԲՍԿԱՇ-ի, բոլոր ծրագրերը ենթարկվում են բնապահպանական և սոցիալական գնահատման՝ օգնելու ՎԶԵԲ-ին որոշել, արդյոք այդ ծրագիրը պետք է ֆինանսավորվի և, եթե այո, ապա ինչպես պետք է լուծվեն բնապահպանական և սոցիալական հարցերը ծրագրի պլանավորման, իրականացման և շահագործման փուլերում: Գնահատման գործընթացը նաև օգնում է հայտնաբերել լրացուցիչ բնապահպանական կամ սոցիալական օգուտներ քաղելու հնարավորությունները: ՎԶԵԲ-ը ձգտում է, իր մանդատի շրջանակներում, իր՝ բնապահպանական և սոցիալական գնահատման և մոնիտորինգի գործընթացների միջոցով ապահովել, որպեսզի ծրագրերը նախագծվեն, իրականացվեն և շահագործվեն համաձայն կիրառվող կարգավորող պահանջների և միջազգային լավագույն փորձի:

Այս Գործիքի շրջանակում բոլոր ծրագրերը կդասակարգվեն և կկազմվեն այնպես, որպեսզի համապատասխանեն ՎԶԵԲ-ի՝ կատարողականի նկատմամբ պահանջներին: Դրանք ավելի մանրամասն նկարագրված են ստորև: ՎԶԵԲ-ի և ծրագրերի աջակցության տեխնիկական խորհրդատուների կողմից կանցկացվի համապարփակ մոնիտորինգ, որը նույնպես նկարագրված է ստորև: ԿԿՀ-ին ներկայացվելիք հաշվետվությունները հիմնված կլինեն այդ մոնիտորինգի արդյունքների վրա:

5. Կատարողականի նկատմամբ պահանջները, բացառությունները, և համապատասխան օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանությունը

Ընդհանուր դրույթներ

ՎԶԵԲ-ը պահանջում է, որպեսզի իր ծրագրերը համապատասխանեն բնապահպանական և սոցիալական կայունության հետ կապված միջազգային լավագույն փորձին: Հաճախորդներին և/կամ նրանց ծրագրերին այդ համապատասխանությանը հասնելու գործընթացում օժանդակելու նպատակով ՎԶԵԲ-ը սահմանել է կատարողականի նկատմամբ հատուկ պահանջներ (ԿՊ-ներ) բնապահպանական և սոցիալական կայուն զարգացման առանցքային ոլորտների համար: ՎԶԵԲ-ը որդեգրել տասը ԿՊ, որոնք համահունչ են և արտացոլում են ՄՖԿ-ի՝ 2012 թ. Կատարողականի չափանիշների ընդհանուր կառուցվածքը, մոտեցումը և խնդիրների շրջանակը, և հատկապես պահանջում են, որպեսզի ծրագրերը համապատասխանեն ԵՄ-ի բնապահպանական չափանիշներին:

Կատարողականի նկատմամբ հատուկ պահանջներ.

ՎԶԵԲ-ի՝ Կատարողականի նկատմամբ տասը պահանջներն են.

- ԿՊ 1 - Բնապահպանական և սոցիալական ազդեցության և խնդիրների գնահատում և կառավարում
- ԿՊ 2 - Աշխատանքը և աշխատանքային պայմանները
- ԿՊ 3 - Ռեսուրսների արդյունավետություն, աղտոտվածության կանխարգելում և վերահսկողություն
- ԿՊ 4 – Առողջապահություն և անվտանգություն
- ԿՊ 5 - Հողի օտարում, հարկադիր տարաբնակեցում և տնտեսական տարահանում

  ԿՊ5-ը սահմանում է Տարաբնակեցման քաղաքականության շրջանակ (ՏՔՇ), որը կիրառվում է ՎԶԵԲ-ի բոլոր ծրագրերի նկատմամբ, որոնք ներառում են հողի օտարում կամ հողօգտագործման փոփոխություն, որը կարող է հանգեցնել ոչ կամավոր տարաբնակեցմանը ֆիզիկական տեղահանման տեսքով (տեղափոխում կամ կացարանի կորուստ) և/կամ տնտեսական տեղահանմանը (ակտիվների կամ ռեսուրսների կորուստ, և/կամ ակտիվների կամ ռեսուրսներ հասանելիության կորուստ, որը եկամուտների աղբյուրների կամ կենսապահովման միջոցների կորստի է հանգեցնում), միևնույն ժամանակ համապատասխանելով ազգային օրենքներին և երկրի կանոնակարգերին: ԿՊ5-ում շարադրված ՏՔՇ-ն նպատակ ունի.

  - խուսափել կամ, երբ դա անխուսափելի է, նվազագույնի հասցնել, հարկադիր տարաբնակեցումը՝ ուսումնասիրելով ծրագրերի այլընտրանքային նախագծերը.
  - մեղմել բացասական սոցիալական և տնտեսական ազդեցությունները, որոնք բխում են հողի օտարման կամ ազդակիր անձանց կողմից ակտիվների և հողի օգտագործման և հասանելիության սահմանափակման արդյունքում հետևյալի միջոցով (i) տրամադրելով փոխհատուցում ակտիվների կորստի համար, դրանց փոխարինման գնով և (ii) ապահովելով, որպեսզի տարաբնակեցման աշխատանքներն իրականացվեն՝ համապատասխան տեղեկությունները բացահայտելով, խորհրդակցություն անցկացնելով և ազդակի անձանց տեղեկացված մասնակցությամբ,

- վերականգնել, կամ որտեղ հնարավոր է, բարելավել տեղահանված անձանց կենսապահովումը և կենսամակարդակը, հասցնելով այն տեղահանմանը նախորդող մակարդակների, և
- բարելավել կենսապայմանները ֆիզիկապես տեղահանված անձանց շրջանում՝ տրամադրելով համապատասխան բնակարաններ, այդ թվում, տարաբնակեցման վայրերից տարահանման դեմ երաշխիք:

ՏՔՇ-ն ներառում է սկրինինգի չափանիշները, համապատասխանության չափանիշներ, գնահատման և իրականացման ընթացակարգեր, խորհրդատվության նկատմամբ հատուկ պահանջներ, ինստիտուցիոնալ մեխանիզմներ, գնահատման մեթոդներ, ընդհանուր իրավասությունների մատրիցա, բողոքարկման և մոնիտորինգի մեխանիզմներ, ակնկալվող բյուջեի և կարողությունների զարգացման պլան (եթե անհրաժեշտ է): ՏՔՇ-ն նաև կներառի պահանջներ և ընթացակարգեր՝ մշակելու տարաբնակեցման գործողությունների ծրագիրը:

- ԿՊ 6 - Կենսաբազմազանության պահպանություն և կենդանի բնական պաշարների կայուն կառավարում
- ԿՊ 7 – Տեղաբնիկներ

Ծրագրին տարածաշրջանում չկան տեղաբնիկներ, հետևաբար տեղաբնիկների վերաբերյալ պլանավորման շրջանակ չի ակնկալվում:

- ԿՊ 8 - Մշակութային ժառանգություն
- ԿՊ 9 - Ֆինանսական միջնորդներ
- ԿՊ 10 - Տեղեկատվության բացահայտում և շահագրգիռ կողմերի ներգրավում

Յուրաքանչյուր ԿՊ իր նպատակներում սահմանում է ցանկալի արդյունքները, որոնց հաջորդում են ծրագրերի նկատմամբ հատուկ պահանջներ՝ օգնելու հաճախորդներին այդ արդյունքներին հասնելու ճանապարհին: Համապատասխան ազգային օրենքներին համապատասխանությունը բոլոր ԿՊ-ների անբաժանելի մաս է կազմում:

ԿՊ-ների ամբողջական տեքստը կարող եք կարդալ այստեղ

6. Դասակարգում

Այս Գործիքի շրջանակներում յուրաքանչյուր ենթածրագիր կենթարկվի բնապահպանական և սոցիալական սկրինինգի և կդասակարգվի որպես A, B կամ C կարգի պատկանող ծրագրի սկզբնական փուլում՝ որոշելու բնապահպանական և սոցիալական հետազոտությունների բնույթը և մակարդակը, ինչպես նաև տեղեկատվության բացահայտման և շահագրգիռ կողմերի ներգրավման պահանջվող ծավալը: Դասակարգումը համաչափ է ծրագրի բնույթին, գտնվելու վայրին, զգայունությանը և մասշտաբին և նրա ապագա բնապահպանական և սոցիալական պոտենցիալ անբարենպաստ ազդեցությունների նշանակալիությանը: Ծրագրի դասակարգման հիմնավորումը և բացատրությունը կփաստաթղթավորվեն: Եթե սկրինինգի և դասակարգման համար բավարար

տեղեկատվությունը հասանելի չէ, ապա կանցկացվի նախնական Բնապահպանական և սոցիալական հետազոտություն՝ հավաքելու բավարար քանակությամբ տեղեկատվություն ծրագրի բնույթի, գտնվելու վայրի, զգայունության և մասշտաբի վերաբերյալ, ինչպես նաև դրա ապագա բնապահպանական և սոցիալական պոտենցիալ բացասական ազդեցությունների նշանակալիության վերաբերյալ, ինչը թույլ կտա սկրինինգի համար տեղեկատվություն հավաքագրել և որոշել համապատասխան դասը և բնապահպանական ու սոցիալական հետազոտությունների շրջանակները և տեղեկատվության բացահայտման ու շահագրգիռ կողմերի ներգրավման ծավալը:

Ծրագիրը ստանում է.

- “A” կարգի դասակարգում, երբ այն կարող է ապագայում հանգեցնել բնապահպանական և/կամ սոցիալական էական պոտենցիալ բացասական ազդեցությունների, որոնք, դասակարգման ժամանակ հնարավոր չէր հեշտությամբ հայտնաբերել կամ գնահատել, և որոնք, հետևաբար, պահանջում են պաշտոնականացված և մասնակցային բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման գործընթաց: “A” դասի ծրագրերը ինդիկատիվ ցանկը ներկայացված է ԲՍՔ-ի Հավելված 2-ում:
- “B” կարգի դասակարգում, երբ նրա ապագա բնապահպանական և/կամ սոցիալական պոտենցիալ բացասական ազդեցությունները սովորաբար հատուկ են կոնկրետ կայքին, և/կամ դրանք հեշտությամբ կարելի է հայտնաբերվել և հաղթահարել մեղմացման միջոցառումների օգնությամբ: Բնապահպանական և սոցիալական գնահատման պահանջները կարող են տարբեր լինել, կախված ծրագրից և կորոշվեն ՎԶԵԲ-ի կողմից ըստ կոնկրետ դեպքի:
- “C” կարգի դասակարգում, երբ հավանական է, որ ապագայում այն կունենա նվազագույն կամ չի ունենա պոտենցիալ բացասական բնապահպանական և/կամ սոցիալական ազդեցություն, և երբ ազդեցության հետևանքներին կարելի է արագ արձագանքել փոքրածավալ բնապահպանական և սոցիալական գնահատման միջոցով:

Բացի այդ, ծրագիրը կստանա «ՖՀ» դասակարգում, եթե ֆինանսավորման կառուցվածքը ներառում է դրամական միջոցների տրամադրում ֆինանսական միջնորդների (ՖՄ) միջոցով, ըստ որի ՖՄ-ն ստանձնում է ենթածրագրի գնահատման և մոնիտորինգի առաջադրանքը:

“A” կարգի ծրագրերը

Կանաչ Քաղաքների Գործիքի շրջանակներում ծրագրերը, որոնք հավանական է, որ կդասվեն A կարգի, ներառում են՝ թափոնների մշակման և հեռացման կայաններ այրման, քիմիական մշակման համար կամ վտանգավոր, թունավոր կամ վնասակար թափոնների թաղման աղբավայր, մեծածավալ թափոնների հեռացման համար նախատեսված կայաններ ոչ վտանգավոր թափոնների այրման կամ քիմիական մշակման համար, համայնքային կեղտաջրերի մաքրման կայաններ, որոնց հզորությունը գերազանցում է 150,000 բնակչության համարժեքը, համայնքային կոշտ թափոնների մշակման և հեռացման մեծածավալ օբյեկտներ: Նման գործողունեությունը նույնպես կարող է դասակարգվել որպես I1, որը սահմանված է ԿԿՇ-ում հետևյալ կերպով «Երբ միջնորդի գործող կամ առաջարկվող պորտֆելը ներառում է, կամ ակնկալվում է, որ կներառի գործունեության այնպիսի տեսակների էական ֆինանսավորում, որոնք պոտենցիալ էական անբարենպաստ

բնապահպանական և/կամ սոցիալական ռիսկերի և/կամ ազդեցությունների կհանգեցնեն, որոնք բազմազան են, անշրջելի և աննախադեպ»:

Ենթածրագրերը, որոնք ստացել են “A” կամ “I1” կարգի դասակարգում, պետք է անցնեն բազմամակարդակ հաստատման գործընթաց, թե՛ ՎԶԵԲ-ի և թե՛ ԿԿՀ խորհրդի կողմից: *A* կարգի բոլոր ենթածրագրերը Կանաչ Քաղաքների Գործիքի շրջանակում պետք է ստանան հավանություն ՎԶԵԲ-ի տնօրենների խորհրդի կողմից այն բանից հետո, երբ պատրաստվեն և հրապարակվեն ԲՍԱԳ փաստաթղթերը՝ ապահովելու, որպեսզի ծրագրերը համապատասխանեն ՎԶԵԲ-ի՝ կատարողականի նկատմամբ պահանջներին և ստորև բերված՝ հրապարակման պահանջներին, և որպեսզի ծրագրերը պոտենցիալ բնապահպանական և սոցիալական ռիսկերը պատշաճ կերպով հայտնաբերվեն, մեղմացվեն և լուծում ստանան: Սա կօգնի ապահովել, որպեսզի “A” կարգի բոլոր ենթածրագրերը նաև համապատասխանեն ԿԿՀ-ի բնապահպանական և սոցիալական գնահատման և շահագրգիռ կողմերի ներգրավման և հրապարակման պահանջներին:

“B” և “C” կարգի ծրագերը

ՎԶԵԲ-ը ձգտում է լիաարժեք հաստատում ստանալ ԿԿՀ խորհրդի կողմից այն ծրագրերի համար, որոնք դասվել են B կամ C կարգերի: Չի պահանջվում, որպեսզի նման ծրագրերը ներկայացվեն ԿԿՀ խորհրդի հետագա գնահատման և հաստատման համար, և դրանք կհաստատվեն ՎԶԵԲ-ի սահմանված գործընթացների միջոցով և կիրականացվեն համաձայն Բանկի բնապահպանական և սոցիալական կայունության խիստ շրջանակների: Կպահանջվի, որպեսզի ծրագրերը համապատասխանեն Բանկի՝ կատարողականի նկատմամբ պահանջներին և հրապարակման պահանջներին, որոնք մանրամասն ներկայացված են ստորև:

7. Բնապահպանական և սոցիալական գնահատում

7.1 Բնապահպանական և սոցիալական գնահատման շրջանակի և բովանդակության սահմանումը

ՎԶԵԲ-ի բնապահպանական և սոցիալական գնահատումը ներառում է երեք հիմնական տարրերի դիտարկում. (i) ծրագրի հետ կապված բնապահպանական և սոցիալական ազդեցություններն ու խնդիրները, (ii) հաճախորդի կարողություններն ու հանձնառությունը՝ իրականացնելու ծրագիրը համաձայն համապատասխան ԿՊ-ների, և (iii) այն չափով, որքանով ընդունելի է, օբյեկտներն ու գործողությունները, որոնք կապված են ծրագրի հետ, բայց չեն ֆինանսավորվում ՎԶԵԲ-ի կողմից: ՎԶԵԲ-ի բնապահպանական և սոցիալական գնահատման շրջանակը կորոշվի ըստ կոնկրետ դեպքերի, վերը նշված սկրինինգի և դասակարգման գործընթացի միջոցով ՎԶԵԲ-ի Բնապահպանական և կայունության զարգացման վարչության («ԲԿԶՎ») կողմից: ԲՍՓ-ի շրջանակը և բովանդակությունը, տեղեկատվության հրապարակումը և շահագրգիռ կողմերի ներգրավման պահանջները համաչափ են ծրագրի հետ կապված պոտենցիալ բնապահպանական և սոցիալական ռիսկերին, խնդիրներին ու ազդեցություններին: Էկոլոգիապես և/կամ սոցիալապես ավելի

բարդ կամ ռիսկային ծրագրերի դեպքում ԲԿՎ-ն կարող է որոշել, որ պետք է նաև մշակել պաշտոնականացված ԲՍՓ-ի պլան և տեխնիկական առաջադրանք ("ՏԱ"):

“A” կարգի ծրագրերը կպահանջեն Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության համապարփակ գնահատում (ՇՄՍԱԳ), որը կներառի պաշտոնականացված և մասնակցային հրապարակայնություն և խորհրդակցության գործընթաց: ՇՄՍԱԳ գործընթացը սկսվում է նախնական փուլից՝ բացահայտելու ծրագրի հետ կապված ապագա բնապահպանական և սոցիալական պոտենցիալ ազդեցությունները: ՇՄՍԱԳ-ը նաև կներառի տեխնիկապես և ֆինանսապես իրագործելի այլընտրանքների ուսումնասիրություն, այդ թվում՝ ծրագրի մաս չկազմող այլընտրանքների, և կփաստաթղթավորի առաջարկվող գործողության կոնկրետ ընթացքն ընտրելու հիմնավորումները: Այն նաև կհայտնաբերի պոտենցիալ բարելավման հնարավորությունները և խորհուրդ կտա անհրաժեշտ միջոցառումներ՝ խուսափելու, կամ, եթե անխուսափելի է, նվազագույնի հասցնելու և մեղմացնելու բացասական ազդեցությունները: Հնարավոր է, որ ՇՄՍԱԳ-ը անհրաժեշտ լինի իրականացնել կամ վավերացնել անկախ փորձագետների կողմից: ՇՄՍԱԳ գործընթացը կհանգեցնի Բնապահպանության և սոցիալական կառավարման պլանի (ԲՍԿՊ), Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի (ՇԿՆՊ) և, որտեղ անհրաժեշտ է, Տարաբնակեցման գործողությունների պլանի, Կենսաբազմազանության կառավարման պլանի կամ Մշակութային ժառանգության կառավարման պլանի, կամ այլ հատուկ կառավարման պլանների մշակմանը:

“B” կարգի ծրագրերը պահանջում են բնապահպանական և սոցիալական գնահատում, որը համաչափ է ծրագրի բնույթին, չափին և գտնվելու վայրին, ինչպես նաև պոտենցիալ ազդեցությունների և ռիսկերի բնութագրերին: Գնահատումը պետք է բնութագրի ծրագրի հետ կապված պոտենցիալ ապագա բացասական ազդեցությունները, բացահայտի պոտենցիալ բարելավման հնարավորությունները և առաջարկի ցանկացած միջոցներ, որոնք անհրաժեշտ են՝ խուսափելու, կամ, եթե անխուսափելի է, նվազագույնի հասցնելու և մեղմացնելու բացասական ազդեցությունները:

Ծրագրերը (թե՛ “A” և թե՛ “B” կարգի), որոնք ներգրավում են գոյություն ունեցող օբյեկտները, կպահանջեն անցյալի և ներկայիս գործառնությունների հետ կապված բնապահպանական և սոցիալական խնդիրների գնահատում: Այս գնահատման նպատակն է բացահայտել գոյություն ունեցող օբյեկտների և գործառնությունների հետ կապված հնարավոր ռիսկերը, պարտավորությունները և հնարավորությունները՝ հաստատելու ներկայիս կարգավիճակի համապատասխանությունը կարգավորող պահանջներին և գնահատելու հաճախորդի առկա կառավարման համակարգերը և ընդհանուր կատարողականը ԿՊ-ների համեմատ: Գոյություն ունեցող օբյեկտների ցանկացած հետազոտություններ պետք է իրականացվեն փորձագետների կողմից, որոնք անկախ են հետազոտվող հաստատությունից:

7.2 Առկա տեղեկությունների ստուգում

ԲՍՓ-ն սկսվում է ծրագրի հետ կապված՝ առկա համապատասխան բնապահպանական և սոցիալական տեղեկատվության հայտնաբերումից և ստուգումից: Այդ տեղեկությունների վերաբերյալ որոշումները կայացվում են Գործառնությունների թիմի և/կամ ԲՍՎ-ի կողմից՝ հաճախորդի հետ միասին:

7.3 Աշխատանքային տարածք կատարվող այցերը

Կախված ծրագրի բնույթից և հաճախորդից ստացված տեղեկատվությունից, ԲՍՎ-ն կարող է պահանջել այցելել աշխատանքային տարածքը ծրագրի փորձաքննության նախնական փուլում՝ որոշելու ԲՍՓ-ի շրջանակի մանրամասները և բովանդակությունը: Նման այցերի համար կսահմանվեն կոնկրետ նպատակներ:

7.4 Բնապահպանական և սոցիալական գնահատման իրականացումը

Հաճախորդը պարտավոր է ապահովել, որպեսզի բնապահպանական և սոցիալական գնահատումը համապատասխանի ԿՊ-ներին և տրամադրի Բանկին համապատասխան տեղեկատվություն՝ անցկացնելու բնապահպանական և սոցիալական գնահատումը: ԲՍՎ-ի դերն է. աջակցել հաճախորդին այս առաջադրանքի իրականացման հարցում և առաջարկել փորձաքննության ծավալը և բովանդակությունը, որոնք անհրաժեշտ են՝ բավարարելու ԿՊ-ներին:

Ակնկալվում է, որ բնապահպանական և սոցիալական գնահատումը հիմնականում կիրականացվի անկախ խորհրդատուների կամ այլ երրորդ կողմի փորձագետների կողմից: Որոշ դեպքերում ծրագիրը կամ հաճախորդը կարող են ունենալ մասնագետ իրենց անձնակազմում կամ խորհրդատուներ, ովքեր կարող են իրականացնել անհրաժեշտ աշխատանքները: Բանկը կարող է բացառիկ իրավիճակներում որոշել, որ ծրագրի բնապահպանական և սոցիալական գնահատումը հարմար է իրականացնել ներքին կարգով՝ Բանկի բնապահպանական և սոցիալական մասնագետների կողմից:

8. Բնապահպանական և սոցիալական կառավարում և գործողությունների պլան

Հաճախորդը պարտավոր է հաշվի առնել բնապահպանական և սոցիալական գնահատման գործընթացի եզրակացությունները և շահագրգիռ կողմերի ներգրավման արդյունքները՝ մշակելու և իրականացնելու գործողությունների ծրագիր՝ անդրադառնալու հայտնաբերված բնապահպանական և սոցիալական ազդեցություններին և ծրագրի խնդիրներին, ինչպես նաև որոշելու, թե կատարողականի բարելավման ինչ միջոցառումներ են հարկավոր ԿՊ-ներին բավարարելու համար:

Կախված նախագծից, Ծրագիրը կարող է բաղկացած լինել փաստագրված գործառնական քաղաքականությունների, կառավարման համակարգերի, ընթացակարգերի, պլանների, պրակտիկայի և կապիտալ ներդրումների համադրությունից, որոնք հավաքականորեն կոչվում են Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման պլաններ (ԲՍԿՊ): Նման պլանների կամ ծրագրերի բաղադրիչները կարող են ներառել, օրինակ, Կենսաբազմազանության գործողությունների պլան, Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան, Տարաբնակեցման գործողությունների պլան, կենսապահովման միջոցների վերականգնման շրջանակ, Տեղաբնիկների զարգացման պլան, Մարդու

իրավունքների գործողությունների պլան, Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան և/կամ այլ կոնկրետ պլաններ: Այլապես, դրանք կարող են լինել առանձին փաստաթղթեր:

Եթե ծրագիրը ի սկզբանե չի համապատասխանում ԿՊ-ներին, ապա հաճախորդը և Բանկը, ի լրումն ԲՍԿՊ-ի, համաձայնում են ԲՍԳՊ-ի շուրջ, որը կներառի տեխնիկապես և ֆինանսապես իրագործելի և ոչ ծախսատար միջոցներ, որպեսզի ծրագիրը հասնի ԿՊ-ներին համապատասխանությանը ՎԶԵԲ-ի համար ընդունելի ժամկետներում: ԲՍԳՊ-ն հիմնական գործիքն է՝ կազմելու ծրագրերը այնպես, որպեսզի նրանք բավարարեն ԿՊ-ներին, ինչպես նաև առանցքային գործիք է ՎԶԵԲ-ի կողմից ծրագրի ընթացիկ բնապահպանական և սոցիալական կատարողականի մոնիտորինգ անցկացնելու համար: ԲՍԳՊ-ն կարող է նաև ներառել միջոցառումներ, որոնք պետք է ձեռնարկի հաճախորդը՝ կառավարելու բնապահպանական և սոցիալական ռիսկերը և/կամ ԿՊ-ներին համահունչ բարելավելու իրենց պրակտիկան իրենց այլ գործառնությունների ոլորտում, որոնք կապված են ծրագրի հետ, բայց դրա մաս չեն կազմում (տե՛ս ԲՍՔ-ի պարբերություն 37-ը և ԿՊ 1-ի պարբերություններ 17-20-ը):

Եթե բնապահպանական և սոցիալական գնահատման արդյունքում ոչ մի շտկիչ գործողություն չի նշված, ապա ԲՍԳՊ չի պահանջվում:

9. Բնապահպանական և սոցիալական պահանջները կառավարելու համար դերերն ու պարտականությունները

9.1 ՎԶԵԲ-ի հաճախորդների դերը և պարտականությունները

Բանկն ակնկալում է, որ իր հաճախորդները կկառավարեն ծրագրերի հետ կապված բնապահպանական և սոցիալական խնդիրները՝ ողջամիտ ժամկետներում բավարարելու ԿՊ-ներին: Ծրագրերը, որոնք ներառում են նոր օբյեկտներ կամ բիզնես գործունեություն, կնախագծվեն այնպես, որպեսզի բավարարեն ԿՊ-ներին մեկնարկի պահից: Եթե ծրագիրը ներառում է գոյություն ունեցող օբյեկտներ կամ գործունեություն, որոնք չեն բավարարում ԿՊ-ներին Խորհրդի հաստատման պահին, ապա հաճախորդից կպահանջվի ձեռնարկել ՎԶԵԲ-ին բավարարող այնպիսի միջոցներ, որոնք տեխնիկապես և ֆինանսապես իրագործելի են և ոչ ծախսատար՝ արդյունավետ կերպով ապահովելու այդ օբյեկտների կամ գործունեության համապատասխանությունը ԿՊ-ներին ՎԶԵԲ-ի համար ընդունելի ժամանակահատվածում: Բացի այդ, ՎԶԵԲ-ը կհամագործակցի իր հաճախորդների հետ՝ կառավարելու բնապահպանական և սոցիալական ռիսկերը համաձայն ԿՊ-ների իրենց այլ գործառնություններում, որոնք կապված են ծրագրի հետ, բայց դրա մաս չեն կազմում:

Հաճախորդը պարտավոր է նաև ապահովել, որպեսզի տրամադրվի համապատասխան տեղեկատվություն, որպեսզի Բանկը կարողանա ձեռնարկել բնապահպանական և սոցիալական գնահատում համաձայն ԲՍՔ-ի: Հնարավոր է, որ հաճախորդից պահանջվի մեկնարկել համապատասխան բնապահպանական և սոցիալական ուսումնասիրությունների իրականացումը և Շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացը և հոգալ դրանց ծախսերը: Ակնկալվումէ նաև, որ հաճախորդը պետք է թույլ տա ՎԶԵԲ-ի ներկայացուցիչներին և անկախ

խորհրդատուներին մուտք գործել դեպի ծրագրի օբյեկտներ և ծանոթանալ փաստաթղթերին: Հաճախորդի նաև պետք է համաձայնության գա Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլանի («ԲՍԳՊ») և Ծրագրի ամփոփ փաստաթղթի («ԾԱՓ») սոցիալական բովանդակության վերաբերյալ:

9.2. ՎԶԵԲ-ի դերը և պարտականությունները

ՎԶԵԲ-ի պարտականությունները համահունչ են իր՝ միջազգային ֆինանսական հաստատություն դերին, որը բանկային ֆինանսավորում է տրամադրում ծրագրերի համար՝ օգտագործելով ՎԶԵԲ-ի ռեսուրսները, որոնք հաստատված են իր ղեկավարության և տնօրենների խորհրդի կամ որոշում կայացնող այլ մարմնի կողմից: Ինչ վերաբերում է որևէ կոնկրետ ներդրման կամ տեխնիկական համագործակցության ծրագրին, ապա ՎԶԵԲ-ի ներգրավվածության մակարդակը որոշվում է, ելնելով ծրագրի բնույթից և շրջանակից, դոնորների կողմից ֆինանսավորման առկայությունից, ինչպես նաև հաճախորդի հետ համագործակցության և հարաբերությունների կոնկրետ հանգամանքներից:

ՎԶԵԲ-ը կարող է ձեռնպահ մնալ ծրագրի ֆինանսավորումից բնապահպանական կամ սոցիալական նկատառումներից ելնելով: ՎԶԵԲ-ը գիտակցաբար չի ֆինանսավորի այն ծրագրերը, որոնք ներառում կամ հանգեցնում են հարկադիր վտարմանը: Բացի այդ, կան գործունեության մի քանի տեսակներ, որոնք ՎԶԵԲ-ը չի ֆինանսավորում համաձայն ՎԶԵԲ-ի Բնապահպանական և սոցիալական բացառման ցուցակի, որը կից ներկայացած է որպես սույն Քաղաքականության Հավելված 1:

10. Շահագրգիռ կողմերի ներգրավում

ՎԶԵԲ-ը կարևորում է հաճախորդների, աշխատակիցների, ծրագրերի ազդակիր տեղական համայնքների, և երբ դա կիրառելի է, նաև այլ շահագրգիռ կողմերի միջև բաց և թափանցիկ ներգրավվածությունը որպես միջազգային լավագույն փորձի (ՄԼՓ) և կորպորատիվ քաղաքացիության էական բաղադրիչ: Նման ներգրավվածությունը նաև ծրագրերի բնապահպանական և սոցիալական կայունության բարելավման միջոց է: Մասնավորապես, համայնքի արդյունավետ ներգրավվածությունը, որը համապատասխանում է ծրագրի բնույթին և ծավալին, նպաստում է բնապահպանական և սոցիալական առողջ ու կայուն գործունեությանը և կարող է հանգեցնել բարելավված ֆինանսական, սոցիալական և բնապահպանական արդյունքների և համայնքի համար առավել օգուտների: Շահագրգիռ կողմերի ներգրավումը առանցքային է՝ ստեղծելու ամուր, կառուցողական և արձագանքող հարաբերություններ, որոնք անհրաժեշտ են ծրագրի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների և խնդիրների արդյունավետ կառավարման համար: Արդյունավետությունը ապահովելու նպատակով, շահագրգիռ կողմերի ներգրավումը պետք է նախաձեռնել ծրագրի վաղ փուլում:

Բանկի՝ Կատարողականի նկատմամբ պահանջ 10-ը (ԿՊ10), որը Բնապահպանական և սոցիալական քաղաքականության մաս է կազմում, պահանջում է, որպեսզի բոլոր ծրագրերի համար, որոնք, ամենայն հավանականությամբ, կունենան անբարենպաստ բնապահպանական և սոցիալական ազդեցություններ և կառաջացնեն խնդիրներ շրջակա միջավայրի, աշխատողների կամ տեղական համայնքների շրջանում, ում վրա ուղղակիորեն ազդել է ծրագիրը (A կարգ), հայտնաբերվեն խնդիրները և ներգրավվեն շահագրգիռ կողմերը որպես ծրագրերի ընդհանուր բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգի (ԲՍԿՀ), ծրագրի բնապահպանական և սոցիալական գնահատման գործընթացի և բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի անբաժանելի մաս:

Ծրագրերը, որոնցից պահանջվում է ԿՊ10-ին համապատասխանություն, պետք է իրականացնեն Շահագրգիռ կողմերի ներգրավումը՝ ժամանակին տրամադրելով համապատասխան, հասկանալի և հասանելի տեղեկատվություն տեղական համայնքներին, որոնք ծրագրի անմիջական ազդակիր են հանդիսանում, և այլ շահագրգիռ կողմերին, տվյալ մշակույթում ընդունված կերպով, և զերծ մնալով մանիպուլյացիաներից, միջամտելուց, պարտադրելուց և սպառնալուց: Շահագրգիռ կողմերի ներգրավման գործունեության և ԿՊ10-ի մասին լրացուցիչ տեղեկատվություն կարող եք գտնել ՎԶԵԲ-ի Բնապահպանական և սոցիալական քաղաքականության մեջ:

Այն ծրագրերի համար, որոնք կարող են ունենալ բացասական բնապահպանական և սոցիալական ազդեցություն, ակնկալվում է, որ, որպես գնահատման գործընթացի անբաժանելի մաս, հաճախորդները կհայտնաբերեն ծրագրի բոլոր շահագրգիռ կողմերին և կնախագծեն շահագրգիռ կողմերի ներգրավման պլան: Խորհրդակցությունը պետք է իմաստալից լինի և հաշվի առնի շահագրգիռ կողմերի տեսակետներն ու մտահոգությունները ծրագրի պլանավորման, իրականացման և շահագործման փուլերում: Հաճախորդը կհայտնաբերի շահագրգիռ կողմերին, ովքեր պոտենցիալ ազդեցություն կկրեն ծրագրին և/կամ հետաքրքրված են այդ ծրագրով, կհրապարակի բավարար տեղեկատվություն ծրագրից բխող ազդեցությունների և խնդիրների մասին և կներգրավի համապատասխան շահագրգիռ կողմերին, ծրագրի հետ կապված պոտենցիալ ազդեցություններին և մտահոգության մակարդակին համաչափ:

A կարգի ծրագրերի համար, հաճախորդը և Բանկը հանրության համար հասանելի կդարձնեն ԲՍԱԳ փաստաթղթերը: Մասնավոր հատվածի ծրագրերի դեպքում ԲՍԱԳ փաստաթղթերը պետք է հասանելի լինեն տնօրենների խորհրդի կողմից ծրագիրը քննարկումից առնվազն 60 օրացուցային օր առաջ, պետական հատվածի ծրագրերի դեպքում՝ խորհրդի քննարկումից 120 օրացուցային օր առաջ: ԲՍԱԳ փաստաթղթերը պատրաստվում են հաճախորդների կողմից, և ՎԶԵԲ-ը դրանք հասանելի է դարձնում առանց որևէ մեկնաբանության կամ ենթադրյալ դրական եզրակացության: Սակայն, մինչ հրապարակելը, ԲՍՎ-ն պետք է համոզվի, որ ԲՍԱԳ փաստաթղթերը համապատասխան և պատշաճ են խորհրդակցության գործընթացի նպատակների համար:
Բացի այդ, ՎԶԵԲ-ի ԿՊ-ները պարունակում են ծրագրերի խորհրդակցության նկատմամբ կոնկրետ պահանջներ, որոնք կարող են հանգեցնել ֆիզիկական և/կամ տնտեսական տեղահանումների կամ ազդել տեղաբնիկների վրա:

11. Բողոքների քննության մեխանիզմ

ՎԶԵԲ-ը պահանջում է, որպեսզի իր հաճախորդները տեղյակ լինեն և ժամանակին արձագանքեն շահագրգիռ կողմերի՝ ծրագրի հետ կապված մտահոգություններին: Այս նպատակով հաճախորդը կստեղծի բողոքարկման արդյունավետ մեխանիզմ, գործընթաց, կամ ընթացակարգ՝ ստանալու շահագրգիռ կողմերի մտահոգություններն ու դժգոհությունները և դյուրացնելու դրանց լուծումը, մասնավորապես, հաճախորդի բնապահպանական և սոցիալական գործունեության մասին: Բողոքների մեխանիզմի մասշտաբը պետք է համապատասխանեցվի ծրագրերի ռիսկերին և պոտենցիալ բացասական ազդեցություններին:

- Բողոքների մեխանիզմի գործընթացը կամ ընթացակարգերը պետք է մտահոգություններին արձագանքեն թափանցիկ, արագ և արդյունավետ կերպով, որն ընդունելի է տվյալ մշակույթի համար և հեշտությամբ հասանելի է ազդակիր համայնքների բոլոր հատվածների համար, անվճար և առանց հատուցման: Մեխանիզմը, գործընթացը կամ ընթացակարգը չպետք է խոչընդոտի դատական կամ վարչական միջոցների հասանելիությունը: Հաճախորդը կտեղեկացնի ազդակիր համայնքներին բողոքարկման գործընթացի մասին համայնքի ներգրավման գործունեության ընթացքում, և պարբերաբար կզեկուցի հանրությանը դրա իրականացման մասին, պաշտպանելով ազդակիր անձանց գաղտնիությունը, և
- Բողոքների քննությունը պետք է վարել տվյալ մշակույթի կողմից ընդունելի կերպով, և վարումը պետք է լինի շրջահայաց, օբյեկտիվ, զգայուն և արձագանքի շահագրգիռ կողմերի կարիքներին ու մտահոգություններին: Մեխանիզմը պետք է նաև թույլ տա անանուն բողոքներ ներկայացնել և անդրադառնա դրանց:

ՎԶԵԲ-ը նույնպես ստեղծել է իր սեփական՝ հաշվետվության մեխանիզմ, Ծրագրերի բողոքարկման մեխանիզմը (ԾԲՄ), որը ստեղծվել է՝ գնահատելու և քննելու Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի վերաբերյալ բողոքները: Այն անհատներին և տեղական խմբերին, որոնք կարող են ուղղակի կամ բացասական ազդեցություն կրել ՎԶԵԲ-ի ծրագրերից, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպություններին տրամադրում է միջոց՝ բողոքներ կամ դժգոհություններ ներկայացնելու Բանկին՝ անկախ բանկային գործառնություններից:

ԾԲՄ-ն ունի երկու գործառույթ.

- համապատասխանության քննության գործառույթը, որի նպատակն է՝ գնահատել, արդյոք Բանկի կողմից հաստատված ծրագիրը համապատասխանում է ՎԶԵԲ-ի քաղաքականությանը, մասնավորապես՝ համապատասխան բնապահպանական քաղաքականությանը և Հանրային տեղեկատվության քաղաքականության՝ ծրագրին վերաբերող դրույթներին, և

- խնդիրների լուծման նախաձեռնությունը, որի նպատակն է վերականգնել երկխոսությունը կողմերի միջև, եթե հնարավոր է, և փորձել լուծել հիմքում ընկած խնդիրները, որոնք առաջացրել են բողոքը կամ դժգոհությունը: Խնդիրների լուծման նախաձեռնությունը կարող է ներառել անկախ փաստահավաք, միջնորդություններ, հաշտեցում, երկխոսության դյուրացում, հետաքննություն կամ հաշվետվություններ:

Բողոքը գնահատելուց հետո հնարավոր է, առաջարկվի Համապատասխանության քննություն և/կամ Խնդիրների լուծման նախաձեռնություն, կամ դրանցից ոչ մեկը:

12. Մոնիտորինգ

ՎԶԵԲ-ի Բնապահպանական և սոցիալական քաղաքականությունը և բնապահպանական ու սոցիալական ընթացակարգերը ուրվագծում են Բանկի ներդրումների բնապահպանական և սոցիալական կատարողականի մոնիտորինգի մոտեցումը և գործընթացը՝ հետևելով Կատարողականի նկատմամբ պահանջների իրականացմանը: Սա ներառում է մեր հաճախորդների կողմից իրականացվող մոնիտորինգը, ինչպես նաև ՎԶԵԲ-ի աշխատակազմի կողմից իրականացվող մոնիտորինգը՝ ստացված հաշվետվությունները ստուգելու, աշխատանքային վայրը այցելելու և երրորդ կողմի մոնիտորինգի միջոցով: Յուրաքանչյուր ծրագրի համար մոնիտորինգի աշխատանքները որոշվում են ծրագրի հետ կապված բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների հիման վրա, որոնք հայտնաբերվել են բնապահպանական և սոցիալական գնահատման ընթացքում: Դրանք կարող են նաև արտացոլել շահագրգիռ կողմերի որևէ էական մտահոգություն և ներառեն բնապահպանական և սոցիալական ստուգում կամ աուդիտ ծրագրի ավարտից հետո, եթե անհրաժեշտ է: Մոնիտորինգի պահանջները և հանձնառությունները պետք է առնվազն ներառեն հաճախորդների կողմից պատրաստվող՝ ծրագրերի վերաբերյալ Տարեկան բնապահպանական և սոցիալական հաշվետվությունների ուսումնասիրություն: ՎԶԵԲ-ը կարող է նաև պարբերաբար ստուգել հաճախորդների կողմից պատրաստված՝ մոնիտորինգի մասին տեղեկատվությունը՝ Բանկի բնապահպանական և սոցիալական մասնագետների և/կամ անկախ փորձագետների կողմից ծրագրի վայր այցելությունների միջոցով:

Եթե հաճախորդը չի կատարում իր սոցիալական և բնապահպանական պարտավորությունները, ինչպես սահմանված է իրավաբանական համաձայնագրերում, ՎԶԵԲ-ը կարող է համաձայնեցնել հաճախորդի հետ առողջացման այնպիսի միջոցառումներ, որոնք պետք է ձեռնարկվեն հաճախորդի կողմից՝ ապահովելու համապատասխանությունը: Եթե հաճախորդը չի կատարում համաձայնեցված առողջացման միջոցառումները, ապա Բանկը կարող է ձեռնարկել այնպիսի գործողություններ և/կամ կիրառել ֆինանսավորման համաձայնագրերում պարունակվող՝ առողջացման այնպիսի միջոցներ, որոնք Բանկը նպատակահարմար կհամարի: ՎԶԵԲ-ը նաև հաճախորդի հետ միասին կուսումնասիրի կատարողականի բարելավման՝ ծրագրին առնչվող ցանկացած հնարավորություն:

13. Հավելվածներ

- Բացառությունների ցանկը (գործունեության տեսակներ, որոնց համար Գործիքը ֆինանսավորում չի տրամադրի)
- Սկրինինգի ստուգաթերթիկ
- Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի ուրվագիծը

Ենթահավելված 1: ՎԶԵԲ-ի բնապահպանական և սոցիալական բացառությունների ցանկ

ՎԶԵԲ-ը գիտակցաբար չի ֆինանսավորի, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, այն ծրագրերը, որոնք ներառում են հետևյալը.

(a) ցանկացած ապրանքի արտադրություն կամ առևտրային գործունեության, որը անօրինական է համարվում ըստ ընդունող երկրի (այսինքն՝ ազգային) օրենքների կամ կանոնակարգերի, կամ միջազգային կոնվենցիաների ու համաձայնագրերի, կամ ենթակա են միջազգային կրճատումների կամ արգելքների, օրինակ.

(i) պոլիքլորացված բիֆենիլների պարունակող ապրանքների արտադրություն կամ առևտուրև[7]
(ii) միջազգային կրճատումների կամ արգելքների ենթակա՝ դեղամիջոցների, պեստիցիդների/ թունաքիմիկատների և այլ վտանգավոր նյութերի արտադրություն կամ առևտուր[8]
(iii) միջազգային կրճատումների ենթակա՝ օզոնային շերտը քայքայող նյութերի արտադրություն կամ առևտուր[9]
(iv) վայրի կենդանիների կամ վայրի բնությունից ստացված ապրանքների առևտուր կամ արտադրություն, որը կարգավորվում է CITES-ի ներքո[10]
(v) միջազգային իրավունքով արգելված թափոնների անդրսահմանային տեղափոխում[11]

---

[7] Պոլիքլորացված բիֆենիլները չափազանց թունավոր քիմիկատների խումբ են կազմում: ՊՔԲ-ները, ամենայն հավանականությամբ, կարելի է գտնել 1950-1985թթ. յուղով լցված էլեկտրական տրանսֆորմատորների, կոնդենսատորների և բաշխիչների մեջ:

[8] Տեղեկատու փաստաթղթերն են ժամանակ առ ժամանակ փոփխվող՝ Խորհրդի Կանոնակարգերը (ԵՏՀ) թիվ 2455/92 1992թ. հուլիսի 23-ով թվագրված, որոնք վերաբերում են որոշակի վտանգավոր քիմիական նյութերի արտահանմանն ու ներմուծմանը, Միավորված ազգերի կազմակերպության համախմբված ցանկը այն ապրանքների, որոնց սպառումը և/կամ վաճառքն արգելվել է, դադարեցվել է, խիստ սահմանափակված է, կամ հաստատված չէ կառավարությունների կողմից, Միջազգային առեվտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասինկոնվենցիան (Ռոտերդամի կոնվենցիա), Կայուն օրգանական աղտոտիչների մասին ստոկհոլմի կոնվենցիայի Ստոկհոլմի կոնվենցիան, Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ թունաքիմիկատների առաջարկվող դասակարգումը ըստ վնասակարության:

[9] Օզոնային շերտը քայքայող նյութերը (ՕՔՆ) քիմիական միացություններ են, որոնք ռեակցիայի մեջ են մտնում և քայքայում ստրատոսֆերայի օզոնը, ինչը առաջացնում է հայնտի «օզոնային անցքերը»: Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրությունը թվարկում է ՕՔՆ-երը և նրանց նպատակային նվազեցումը և օգտագործման դադարեցման ժամկետները: Մոնրեալի արձանագրությամբ կարգավորվող քիմիական միացությունների ցանկը, որը ներառում է աերոզոլներ, սառեցնող հովացուցիչ նյութեր, փրփուր փչող նյութեր, լուծիչներ, հակահրդեհային նյութեր, ինչպես նաև ստորագրող երկրների մանրամասն ցանկը և դադարեցման թիրախային ամսաթվերը հասանելի են Միավորված ազգերի կազմակերպության շրջակա միջավայրի ծրագրում:

[10] CITES: «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա: CITES-ում նշված տեսակների ցանկը կարելի է ստանալ CITES-ի քարտուղարությունից:

(b) չկապակցված ասբեստի մանրաթելերի կամ ասբեստ պարունակող ապրանքների արտադրություն կամ օգտագործում կամ առևտուր:

(c) Գործունեություն, որն արգելված է ընդունող երկրի օրենքներով կամ միջազգային կոնվենցիաներով, որոնք վերաբերում են կենսաբազմազանության ռեսուրսների կամ մշակութային ժառանգության պաշտպանությանը[12]

(d) Դրեյֆային ցանցով ձկնորսություն ծովային միջավայրում՝ օգտագործելով ցանցեր, որոնց երկարությունը գերազանցում է 2.5 կմ:

(e) Նավթի կամ այլ վտանգավոր նյութերի տեղափոխում տանկերներով, որոնք չեն համապատասխանում IMO պահանջներին[13]

(f) ապրանքների առևտուր, առանց պահանջվող արտահանման կամ ներմուծման լիցենզիաների կամ տրանզիտի այլ թույլտվության ապացույցների արտահանման, ներմուծման և, եթե կիրառելի է, տրանզիտի համապատասխան երկրներից:

---

[11] Տեղեկատու փաստաթղթերն են՝ թափոնների բեռնափոխադրումների կանոնակարգ (ԵՀ) 1013/2006 2006թ. հունիսի 14-ով թվագրված, Որոշում C (2001) 107 / եզրափակիչ ՏՀԶԿ խորհրդի կողմից որոշում C (92) 39 / եզրափակիչ վերանայման՝ թափոններով անդրսահմանային տեղափոխման վերահսկողության վերաբերյալ, որոնք նախատեսված են վերականգնման գործողությունների համար: բազելյան կոնվենցիա վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման եվ դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին:

[12] Համապատասխան միջազգային կոնվենցիաները ներառում են. Վայրի կենդանիների միգրացվող տեսակների պահպանության մասին կոնվենցիան (Բոնի կոնվենցիա), միջազգային կարևորություն ունեցող՝ ջրա-ճահճային տարածքների մասին կոնվենցիան, ջրային թռչունների բնակավայրերի մասին (Ռամսարի կոնվենցիան), Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին կոնվենցիան (Բեռնի կոնվենցիա), Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիան, Կենսաբազմազանության մասին կոնվենցիան:

[13] Սա ներառում է. տանկերներ, որոնք չունեն անհրաժեշտ հավաստագրեր «Նավերից առաջացող աղտոտումը կանխարգելելու մասին» (MARPOL) միջազգային կոնվենցիայից, «Ծովում մարդկային կյանքի պահպանման մասին» (SOLAS) միջազգային կոնվենցիայից (այդ թվում չունեն, առանց սահմանափակման, միջազգային անվտանգության կառավարման օրենսգրքին համապատասխանություն), տանկերներ, որոնք Եվրոպական միության սև ցուցակում են կամ արգելված են Պետության կողմից նավահանգիստների վերահսկողության՝ Փարիզի փոխըմբռնման հուշագրով (Փարիզի ՓՀ), և տանկերներ, որոնց օգտագործումը պետք է նվազագույնի հասցվի MARPOL 13G կարգավորման համաձայն: Չպետք է օգտագործվի ոչ մի մեկ կորպուս ունեցող տանկեր, որը 25 տարեկանից հին է:

Ենթահավելված 2: Սկրինինգի ստուգաթերթիկը

Ներածություն

Համապատասխանության ամփոփագիրը տրամադրում է ստուգաթերթիկ համակարգված ստուգման համար՝ հայտնաբերելու բնապահպանական և սոցիալական ռիսկերը և ազդեցությունները, ՎԶԵԲ-ի բնապահպանական և սոցիալական քաղաքականության համաձայն, ինչպես սահմանված է կիրառվող՝ Կատարողականի նկատմամբ պահանջներում (ԿՊ): Համապատասխանության շրջանակը ընդգրկում է բոլոր ԿՊ-ները, որոնք կիրառելի են ոչ-ՖՀ ծրագրերի նկատմամբ : Ստուգումը նախատեսված է՝ սահմանելու որոշակի բազա, որի հիման վրա պետք է դատել ծրագրերի հետագա կատարողականի մասին՝ բնապահպանական և սոցիալական տարեկան հաշվետվությունների գործընթացի միջոցով:

Ուղեցույց

Բոլոր ԿՊ-ների համար (ցուցանիշները և հղումների համարները) պետք է ներկայացնել ԿՊ-ներին ընդհանուր համապատասխանության մասին ամփոփագիր: ԿՊ-ներից ցանկացած շեղման հիմնավորումը պետք է ամփոփել՝ հղումներ անելով հիմնավորող փաստաթղթերին:

ԿՊ-ների ներքո յուրաքանչյուր ցուցանիշի համար, խնդրում ենք կատարել հետևյալ 3 քայլերը.

1. **Որոշե՛ք, արդյոք ցուցանիշը կիրառելի է:** A և B կարգերի ծրագրերի համար մեկնակետն այն է, որ բոլոր ցուցանիշները կիրառելի են, բացի այն դեպքերից, երբ ծրագիրը չունի էական ասպեկտներ, որոնք համապատասխանում են այդ ցուցանիշին (այսինքն, չկան ռիսկեր), որի դեպքում ցուցանիշը պետք է պիտակել որպես " կիրառելի չէ" և ներկայացնել համառոտ հիմնավորում: C կարգի շրագրերի մեկնակետն այն է, որ ոչ մի ցուցանիշ կիրառելի չէ, բացի այն դեպքերից, երբ ծրագիրն ունի ցուցանիշին առնչվող՝ նշանակալի ասպեկտ (այսինքն, կա նյութական ռիսկ):

2. **Որոշե՛ք, արդյոք հնարավոր է կարծիք կազմել:** Եթե ոչ (օրինակ, եթե ցուցանիշը կկիրառվի, բայց այժմ դեռ վաղ է այդ մասին խոսել ծրագրի առնչությամբ), ապա նշե՛ք, որ «Հնարավոր չէ կարծիք կազմել» և ներկայացրե՛ք ամփոփ բացատրություն, թե ինչու: Այն դեպքերում, երբ կարծիքի բացակայությունը իրենից ներկայացնում է ստուգման ընթացքում նյութական բացթողում, հղում կատարե՛ք, թե որտեղ եք դրան անդրադառնում հաշվետվության մեջ՝ ամփոփելով ձեր առաջարկությունները:

3. **Գնահատե՛ք ցուցանիշը ըստ ստորև բերվածի և ներկայացրեք հակիրճ հիմնավորում:**

ՀԳ	**Համապատասխանության գերազանցում.** Ծրագիրը գերազանցել է ՎԶԵԲ-ի ԿՊ-ների պահանջների սպասումները: ՎԶԵԲ-ը պետք է կարողանա օգտագործել ՀԳ գնահատված ծրագրերը որպես դրական բնապահպանական և սոցիալական ազդեցությունների օրինակելի մոդել:
ԼՀ	**Լիարժեք համապատասխանություն.** Ծրագիրը լիովին համապատասխանում է ՎԶԵԲ-ի պահանջներին և ԵՄ-ի ու տեղական բնապահպանական, առողջապահական և անվտանգության քաղաքականություններին և ուղեցույցներին:
ՄՀ	**Մասնակի համապատասխանություն.** Ծրագիրը լիարժեք չէ համապատասխանում ՎԶԵԲ-ի պահանջներին, սակայն ունի համակարգեր, գործընթացներ կամ մեղմացման միջոցառումներ, որոնք կիրառվում են՝ թերությունները վերացնելու նպատակով:
ՆԱ	**Նյութական անհամապատասխանություն.** Ծրագիրը նյութապես չի համապատասխանում ՎԶԵԲ-ի պահանջներին, իսկ համակարգերը, գործընթացները և մեղմացման միջոցառումները չեն աշխատում թերությունները վերացնելու ուղղությամբ:

4. **Մեկնաբանություններ / խնդիրներ.** Ներկայացրե՛ք համառոտ մեկնաբանություն ծրագրի համար այս պահանջի կարևորության մասին և բացատրե՛ք տրված գնահատականը:

5. **Պահանջվող գործողությունները.** Որտեղ կիրառելի է, համառոտ նկարագրե՛ք ցանկացած գործողություններ, որոնք պահանջվում են հաճախորդի կողմից՝ հասնելու յուրաքանչյուր պահանջին լիարժեք համապատասխանությանը: Այն դեպքում, երբ համապատասխան գործողություն ներառված է այս ծրագրի ԲՍԳՊ-ում, խնդրում ենք ԲՍԳՊ-ին հղում կատարել:

6. **ԿՊ-ների ամփոփագիր.** Ներկայացնել ընդհանուր ամփոփագիր ԿՊ-ների հետ համեմատությամբ՝ օգտագործելով համապատասխանության վերը նշված սահմանումները, ինչպես նաև ուղեցկող մեկնաբանություն: Որոշ դեպքերում կարող է բավարար լինել անդրադառնալ որևէ ԿՊ-ի միայն ափոփագրի ձևաչափով, կախված վերը բերված Քայլ 1-ից:

Ծանոթագրություն. Նյութական անհամապատասխանության գնահատականը (թե՛ ցուցանիշի և թե՛ ԿՊ-ի մակարդակով) էական հետևանքներ ունի Ծրագրի հաստատման համար և պահանջում է հատուկ ուշադրություն: Որոշելիս, թե արդյոք միջոցառումները բավարար կերպով անդրադառնում են թերություններին, խորհրդատուն պետք է համակարգված եղանակով հաշվի առնի թե՛ մնացորդային (հաստատումից հետո) ռիսկի մակարդակը և թե՛ վստահության մակարդակն առ այն, որ Ծրագիրը կարող է հաջողությամբ ապահովել այդ խնդրի համապատասխանությունը Քաղաքականությանը ԲՍԳՊ-ի միջոցով: Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս, թե ինչպիսի մոտեցում է պետք որդեգրել:

Ռիսկ			
Բարձր	ՄՀ	ՆԱ	ՆԱ
Միջին	ՄՀ	ՄՀ	ՆԱ
Ցածր	ԼՀ	ՄՀ	ՄՀ
	Բարձր	Միջին	Ցածր
	Վստահություն		

ԱՀՑ-ներին հղում	Կատարողականի նկատմամբ պահանջ	Գնահատական	Մեկնաբանություններ/Խնդիրներ	Պահանջվող գործողություններ	ԲՍԳՊ-ին հղում
1	**Բնապահպանական և սոցիալական ազդեցության և հարցերի գնահատում և կառավարում**				
	Ամփոփագիր.				
1.1	Բնապահպանական և սոցիալական գնահատում				
1.2	Բնապահպանական եւ սոցիալական կառավարման համակարգեր				
1.3	Բնապահպանական եւ սոցիալական քաղաքականություն[14]				

[14] Երբ ծրագիրն իրենից ներկայացնում է հաճախորդի գործունեության էական ընդլայնում, հաստատե՛ք, որ Քաղաքականությունը և աջակցող կառավարման համակարգերը և պլանները համապատասխանում են նոր գործունեությանը:

ԱՀՑ-ներին հղում	Կատարողականի նկատմամբ պահանջ	Գնահատական	Մեկնաբանություններ/Խնդիրներ	Պահանջվող գործողություններ	ԲՍԳՊ-ին հղում
1.4	Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան				
1.5	Կազմակերպության կարողությունները և հանձնառությունը				
1.6	Մատակարարման շղթայի կառավարում				
1.7	Ծրագրի մոնիտորինգ և հաշվետվություն[15]				
2	**Աշխատանքային պայմանները**				
	Ամփոփագիր.				
2.1	Մարդկային ռեսուրսների քաղաքականությունները և Աշխատանքային հարաբերությունները				
2.2	Երեխաների աշխատանքը և Հարկադիր աշխատանքը				
2.3	Խտրականության բացառում և հավասար հնարավորություններ				
2.4	Աշխատողների կազմակերպություններ				

[15] Գնահատման փուլում տեղեկատվությունը կլինի սահմանափակ: Համապատասխանության գնահատումը պետք ուսումնասիրի մոնիտորինգի և հաշվետվության հատուկ պլանները (օրինակ՝ ԲՍԳՊ պահանջների համեմատությամբ), ինչպես նաև դիտարկի, թե արդյոք կա ապացույց առ այն, որ հաճախորդի այլ համապատասխան ծրագրերի մոնիտորինգը/հաշվետվությունները թերի են եղել, ինչը կարող է նվազեցնել հետագա կատարողականի հանդեպ վստահությունը:

ԱՀՑ-ներին հղում	Կատարողականի նկատմամբ պահանջ	Գնահատական	Մեկնաբանություններ/Խնդիրներ	Պահանջվող գործողություններ	ԲՍԳՊ-ին հղում
2.5	Աշխատավարձը, նպաստները և աշխատանքի ուկեցության պայմանները				
2.6	Ծախսերի կրճատում[16]				
2.7	Բողոքների ներկայացման մեխանիզմը				
2.8	Կազմկերպության աշխատակից չհանդիսացող աշխատողներ				
2.9	Մատակարարման շղթա				
2.10	Անվտանգության աշխատակիցների նկատմամբ պահանջները				
3	**Ռեսուրսների արդյունավետություն և աղտոտվածության կանխարգելում ու վերահսկողություն** ***Մանրամասնություն.*** *Գնահատումը պետք է ուշադիր քննի (և նշի), թե ինչ կանոնակարգեր կամ չափանիշներ ենկիրառվել համապատասխանության գնահատման ընթացքում (օրինակ, ԵՄ, ազգային, ոլորտի լավագույն պրակտիկա): Գնահատման ընթացքում պետք է ուսումնասիրել այլընտրանքային մեթոդների արդյունավետությունը:*				
	Ամփոփագիր.				
3.1	Ռեսուրսների արդյունավետություն				
3.2	Աղտոտվածության կանխարգելում և վերահսկողություն. Արտանետումը մթնոլորտ				
3.3	Աղտոտվածության կանխարգելում և վերահսկողություն. Կեղտաջրեր				

[16] Չի կիրառվելու շատ ծրագրերի նկատմամբ գնահատման փուլում: Սակայն պետք է հաշվի առնվեն այն ապացույցները, որոնք վերաբերում են վերջին 3 տարիների ընթացքում հաճախորդի՝ ծախսերի կրճատման մոտեցմանը, որը համատեղելի չէ Քաղաքականության հետ:

ԱՀՑ-ներին հղում	Կատարողականի նկատմամբ պահանջ	Գնահատական	Մեկնաբանություններ/Խնդիրներ	Պահանջվող գործողություններ	ԲՍԳՊ-ին հղում
3.4	Ջերմոցային գազեր [17]				
3.5	Ջուր				
3.6	Թափոններ				
3.7	Վնասակար նյութեր				
4	**Առողջապահություն և անվտանգություն**				
	Ամփոփագիր.				
4.1	Մասնագիտական առողջապահություն և անվտանգություն				
4.2	Համայնքային առողջապահություն և անվտանգություն				
4.3	Ենթակառուցվածքների, շենքերի և սարքավորման նախագծում և անվտանգություն				
4.4	Վնասակար նյութերի անվտանգություն				
4.5	Ապրանքների և ծառայությունների անվտանգություն				
4.6	Երթևեկության և ճանապարհային անվտանգություն				

[17] Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի Հաճախորդի կողմից այլընտրանքների դիտարկմանը: Ծրագրերը, որոնք ակնկալվում է, որ տարեկան կարտադրեն ավելի քան 25,000 տոննային համարժեք ածխաթթու գազ, պետք է տրամադրեն արտանետումների ցուցակագրում և տարեկան հաշվետվությունների պլաններ:

ԱՀՑ-ներին հղում	Կատարողականի նկատմամբ պահանջ	Գնահատական	Մեկնաբանություններ/Խնդիրներ	Պահանջվող գործողություններ	ԲՍԳՊ-ին հղում
4.7	Բնական վտանգներ				
4.8	Հիվանդություններ				
4.9	Արտակարգ իրավիճակներին պատրաստվածություն և արձագանքում				
5	**Հողի օտարում, հարկադիր տարաբնակեցում և տնտեսական տարահանում**				
	Ամփոփագիր.				
5.1	Խուսափել կամ նվազագույնի հասցնել տեղահանումները				
5.2	Խորհրդակցություն				
5.3	Տեղահանված անձանց վճարվող փոխհատուցում				
5.4	Բողոքների ներկայացման մեխանիզմը				
5.5	ՏԳԾ/ԿՄՎՊ փաստաթղթեր				
5.6	ՏԳՊ/ԿՄՎՊ իրականացում				
5.7	Մոնիտորինգ				
6	**Կենսաբազմազանության և կենդանի բնական պաշարներ**				
	Ամփոփագիր.				
6.1	Կենսաբազմազանության և կենդանի բնական պաշարների գնահատումը				
6.2	Կենսաբազմազանության պահպանում				

ԱՀՑ-ներին հղում	Կատարողականի նկատմամբ պահանջ	Գնահատական	Մեկնաբանություններ/Խնդիրներ	Պահանջվող գործողություններ	ԲՍԳՊ-ին հղում
6.3	Կենդանի բնական պաշարների կայուն կառավարում				
7	**Տեղաբնիկներ**				
	Ամփոփագիր.				
7.1	Տեղաբնիկների վերաբերյալ գնահատում				
7.2	Բացասական հետևանքներից խուսափում և տեղաբնիկների զարգացման պլան				
7.3	Տեղեկատվության հրապարակում, իմաստալից խորհրդատվություն և տեղեկացված մասնակցություն				
7.4	Բողոքների ներկայացման մեխանիզմը և էթնիկական խտրականության կանխարգելում				
7.5	Փոխհատուցում և շահույթի /օգուտների/ բաշխում				
7.6	Ազդեցություն/ Տարաբնակեցում ավանդական հողերից և Մշակութային ժառանգություն				
8	**Մշակութային ժառանգություն**				
	Ամփոփագիր.				
8.1	Մշակութային ժառանգության վրա ազդեցության գնահատում և կառավարում				

ԱՀՑ-ներին հղում	Կատարողականի նկատմամբ պահանջ	Գնահատական	Մեկնաբանություններ/Խնդիրներ	Պահանջվող գործողություններ	ԲՍԳՊ-ին հղում
8.2	Խորհրդակցություն ազդակիր համայնքների և այլ շահագրգիռ կողմերի հետ				
8.3	Ծրագրի կողմից Մշակութային ժառանգության օգտագործումը				
10	**Տեղեկատվության հրապարակում և Շահագրգիռ կողմերի ներգրավում**				
	Ամփոփագիր.				
10.1	Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան				
10.2	Գործառնությունների վերաբերյալ բողոքների ներկայացման մեխանիզմ				
	Ընդհանուր համապատասխանություն				
	Ազգային բնապահպանական, սոցիալական, առողջապահական և անվտանգության պահանջները				
	ԵՄ-ի Բնապահպանական, սոցիալական, առողջապահական և անվտանգության պահանջները				

Ենթահավելված 3. Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի ուղեցույց

Հետևյալ ցանկում ներկայացված են հնարավոր խնդիրները, որոնք կարելի է ներառել Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանում: Ակնկալվում է, որ խորհրդատուն կօգտագործի իր մասնագիտական դատողությունը՝ որոշելու համար, թե որ հարցերն են (ստորև նշվածներից կամ լրացուցիչ) վերաբերում Ծրագրի շրջանակին:

Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանը պետք է.

- Հակիրճ ներկայացնի Ծրագրի իրականացման վայրը և ազգակիր տարածքները (օրինակ, համայնքների ցանկը)
- Գրանցի, թե ինչ իրավաբանական պահանջներ կան Ծրագրի նկատմամբ, կապված հրապարակման և խորհրդակցությունների հետ
- Հայտնաբերի բոլոր շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ շահագրգիռ կողմերի քարտեզները (եթե կիրառելի է)
- Հայտնաբերի որևէ հատուկ խմբեր, որոնք կարող են համարվել խոցելի կամ ավելի մեծ աջակցության կարիք ունեն խորհրդակցական գործընթացում, օրինակ՝ պայմանավորված իրենց գրագիտության մակարդակով, սեռով, սոցիալ-տնտեսական մակարդակով, էթնիկական պատկանելիությամբ/լեզվով կամ գտնվելու վայրով (օրինակ՝ ծրագրի հարևանությամբ կա դպրոց, հիվանդանոց, և այլն): Հայտնաբերված յուրաքանչյուր խմբի համար պետք է նշել, թե ինչպես է իրականացվելու իմաստալից խորհրդատվություն
- Հաշվետվություն ներկայացնի ցանկացած նախորդ քննարկումների և հրապարակման գործունեության վերաբերյալ
- Որոշի, թե որը փաստաթղթերն են հրապարակվելու, այդ թվում՝ ժամանակացույցը, և ինչ լեզվով (լեզուներով)
- Սահմանի, թե որտեղ հասանելի կլինեն փաստաթղթերը (ֆիզիկական և առցանց հասցեները), օրինակ՝ նշի կոնկրետ թերթերի անունները, հայտարարությունների տախտակների գտնվելու վայրերը և այլն:
- Սահմանի, թե ինչպես մարդիկ կտեղեկացվեն փաստաթղթի հասանելիության մասին
- Նշի խորհրդակցության սկզբի և ավարտի ամսաթվերը
- Տրամադրի հանդիպումների, գործունեության կամ հնարավորությունների աղյուսակ կամ ցանկ՝ մեկնաբանություններ անելու համար: Եթե վայրերը /ժամկետները դեռևս հայտնի չեն, պետք է նշել, թե ինչպես մարդիկ կտեղեկացվեն ժամկետների մասին
- Նշի, թե ում/որտեղ է պետք ուղարկել մեկնաբանությունները, ինչ է տեղի ունենալու նրանց հետ և ինչպես են մարդկանց տեղեկացնելու արդյունքների մասին
- Սահմանի, թե ինչպես են արձագանքելու բողոքներին (ներառելով հասարակական բողոքարկման կոնկրետ գործընթաց)
- Սահմանի մոնիտորինգի և հաշվետվությունների աշխատանքները շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացի համար
- Սահմանի Շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացը իրականացնելու պարտականությունները:

ՇԿՆՊ-ը պետք է լինի հակիրճ և չգերազանցի 15 էջը, բացառությամբ հավելումների:

Խնդրում ենք նաև ծանոթանալ ուղեցույցին.
http://www.ebrd.com/downloads/about/sustainability/grievance-mechanism.pdf